

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԻՄՈՐԻ  
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՋԱՐԱՄԵԱԿԻ  
ՆՈՐԱԳՈՅՆ ՊԵՏՈՒԹԻՆԸ

# ԱՐՁԱՆԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 75ԳԻ-ՏԱՐԻ, ԹԻԻ 59 (21109) ԵՐԿՐՈՒՇԱՐԹԻ, 20 ՄԱՅԻՍ 2002 10 ԷՋ

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ  
ՄՈՆԻՏՐԻՆԻ «ԱԶԴԱԿ»Ի  
ՄՐՑԱԼՔԻՆ

Շարաթ օր սկսաւ Մոնտիալի  
«Ազդակ»ի մեծ մրցանքը, նախորդ-  
ներէն բոլորովին տարբեր օրէն-  
քներով եւ ընթացքով: Մասնակցե-  
ցէ՛ք անոր եւ շահեցէ՛ք Պէյրութ -  
Լոնտոն - Պէյրութ օդանաւային  
տոմս մը, ինչպէս նաեւ արժէքա-  
ւոր այլ նուէրներ:


## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԱՆԳՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԸ



Արաբ արտաքին գործոց նախարարները՝ նախագահ Լահուտի հետ, Պաապտա պալատի մէջ:

Խաղաղութեան արա-  
բական նախաձեռնու-  
թեան արար արտաքին  
գործոց նախարարներու  
յանձնախումբը Շարաթ  
օր Պէյրութի «Ֆենիսիա»  
պանդոկին մէջ գումարեց  
իր անդրանիկ պաշտօնա-  
կան ժողովը, որ վերա-  
հաստատեց, թէ արաբա-  
կան աշխարհը կառուած կը  
մնայ այդ նախաձեռնու-  
թեան՝ որպէս սկզբուն-  
քային մեկնակէտ: Ժողո-

## ՊԵՆ ԼԱՏԵՆԻ ՆՈՐ ՎԻՏԵՕ-ԵՐԻՉԸ «ՔԱՅԻՏԱ» ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԾՐԱԳԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԸԱՆՁՆԵՐՈՒ ՄԵՋ



Պրն Լատեն Գորագոյն Վիտեօ - Երիզի մէջ:

Բրիտանիոյ մէջ գտնուող իսլամական «Ա.Գաար»  
լրատու գործակալութիւնը երէկ հրատարակած է վի-  
տեօ-երիզ մը, որ ցոյց կու տայ Ուսամա Պրն Լատենը:  
100 երկվարկեան տեղեկութեամբ ժապաւէնը ցոյց  
կու տայ Պրն Լատենը նստած՝ բացօթեայ տեղ մը, ուր ան  
կը խօսի ժապաւէնին մէջ չընկերացող հետեւորդներու:  
Ըստ «Ա.Գաար»ի՝ ժապաւէնը Մարտին արձանագրու-  
ած է: Եթէ է այս տեղեկութիւնը ճիշդ է, անիկա  
առաջին փաստ մը պիտի ըլլայ, թէ Պրն Լատեն ողջ  
դուրս եկած է ամերիկեան յարձակումներէն:  
Ոչ Պրն Լատենի խօսքերը, ոչ ալ նկարուած վայրը  
լոյս կը սփռեն ժապաւէնի պատրաստութեան ժամա-  
նակին մասին: Պրն Լատեն կը խօսի նահատակու-  
թեան արժանիքներուն մասին յատկապէս:  
«Ա.Գաար» յայտնած է, թէ ժապաւէնը հայթայթած  
են փաթիտանցի գաղտնի սպասարկութեանց պաշ-  
տօնատարները:  
Անիկա մաս կը կազմէ 40 վայրկեան տեղեկու-  
թեամբ ժապաւէնի մը, որուն մէկ այլ բաժինին մէջ  
Պրն Լատեն «Ժազիրա» կայանին մէկ թղթակիցին  
հարցումներուն պատասխանելով, կը պատասխանէ, թէ  
որեւէ երկիր, որ իսլամական կամ Մ. Նահանգներու  
կողմէն կանգնի՝ «Քայլիտա»ի թիրախ պիտի դառնայ:  
«Ա.Գաար» թղթակիցներէն մէկուն համաձայն՝  
հարցազրոյցը տեղի ունեցած է Նոյեմբերին, սակայն  
անիկա «Ժազիրա»ի կողմէ չէ սփռուած:

### Մ. ՆԱԸԱՆՁՆԵՐՈՒ ԿՈՒՅ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

Միւս կողմէ, Մ. Նահանգներու փոխ նախագահ  
Տիք Չէյնի երէկ յայտնած է, որ Մ. Նահանգներու  
վրայ նոր յարձակում մը «գրեթէ վստահօրէն» տեղի  
պիտի ունենայ, նկատի ունենալով, որ ամերիկեան  
գաղտնի սպասարկութեանց պաշտօնատարներ փա-  
տեր ձեռք ձգած են, թէ նոր յարձակում մը կը պատ-  
րաստուի:

Ամերիկացի պաշտօնատար մը Շարաթ օր յայտ-  
նած է, թէ գաղտնի սպասարկութեանց գործակալու-  
թիւններ «թափ առած գործունէութիւն» նկատած  
են, ինչ որ կրնայ նշանակել, որ «Քայլիտա» նոր յար-  
ձակումներ կը ձրագրէ:  
«Նիւ Եորք Թայմզ» թերթը յայտնած է, որ պաշ-  
տօնատարներ «Քայլիտա»ի անդամներու միջեւ  
«բռնած են» շարք մը պատգամներ, որոնք ցոյց կու  
տան, թէ խմբակը պիտի փորձէ Սեպտեմբեր 11 յար-  
ձակումներուն նման մեծ կամ նոյնիսկ աւելի մեծ  
յարձակումի մը ձեռնարկել:

Չէյնի յայտնած է, որ տեղեկութիւնները յստակ կը  
դարձնեն, որ սպանուած Նոյեմբեր իրական է այ-  
սօր, որքան անցեալ Սեպտեմբերին:  
Անոր այդ արտայայտութիւնները տեղի կ'ունե-  
նային, մինչ Սպիտակ Տունը կը շարունակէր խիստ  
քննադատութեանց առարկայ դառնալ այն հարցով,  
թէ յարձակումներէն առաջ ամերիկեան վարչակար-  
գին որոշ տեղեկութիւններ հասած են «Քայլիտա»ի  
ծրագիրներու մասին, որոնց գծով սակայն որեւէ  
քայլ չէ դիմուած:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՆԵԹԱՆԻՍ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. 3 ՁՈՂ, 35 ՎԻՐԱԻՈՐ

Զօրաւոր պայթում մը երէկ յետմիջօրէին ցնցեց  
Իսրայէլի Նեթանիա քաղաքին մէկ շուկան, ուր երեք  
գոհ եւ աւելի քան երեսունհինգ վիրաւորներ արձա-  
նագրուեցան:  
Իսրայէլի ռատիոկայանը հաղորդեց, որ պաղես-  
տինցի մը անձնասպանական գործողութիւն մը կա-  
տարած է բացօթեայ շուկայի մը մէջ: Ականատեսներ  
բոլոր, որ անձնասպանական գործողութիւնը կատա-  
րողը իսրայէլեան բանակի տարագ չափազանց  
կու տան, որ անձնասպանական գործողութիւն է,  
որովհետեւ յիշեալ շուկան ինքնաշարժ չի մտնել:  
Աւելի ուշ, պաղեստինեան «Համաս» եւ «Է.Ֆ. Տէ-  
էլ. Փէ» կազմակերպութիւնները ստանձնեցին անձ-  
նասպանական գործողութեան պատասխանատուու-  
թիւնը:  
(ՌՈՅԹԸՐԸ)

## ԻՐԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԵՅՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՐՆԵՐՈՒՄԻ ՄԻՋԵՒ ՍՈՒՐ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ՝ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ԱՆՈՒՄՆ ԾՈՐԸ

Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի Շարաթ օր  
Թեհրանի մէջ ընդունեց Ազրպէյճանի նախագահ Հայ-  
տար Ալիեւը: Ալիեւ պաշտօնական եռօրեայ այցելու-  
թեան մը համար Իրան կ'այցելէ: Իրան եւ Ազրպէյճան  
տարակարծիք են կասպից ծովու մէջ քարիւղի կարգ  
մը հանքերու պատկանելութեան գծով: Այս տարա-  
կարծութիւնը նոյնիսկ զբսեւորուեցաւ Ալիեւի ըն-  
դունելութեան արարողութեան ընթացքին, երբ իս-  
թեմի եւ Ալիեւ չըրցան համաձայնի կասպիցի ան-  
լան շուրջ:

Ընդունելութեան իր խօսքին մէջ, ակնարկելով  
անցեալ Ազրպէյճանի Թուրքմենիստանի մէջ կայացած  
բանակցութիւններուն, իսթեմի ըսաւ. «Նախագահ-  
ներու վեհաժողովը Աշխապատի մէջ Մազանտարան  
ծովու մասին կարեւոր էր»: Ալիեւ, ընդմիջելով հարց  
տուաւ, թէ ինչ է Մազանտարան ծովը: «Դուք կաս-  
պից ծով կը կոչէք, մենք՝ Մազանտարան ծով», պա-  
տասխանեց իսթեմի: Մազանտարան կասպիցը եզե-  
րող իրանեան նահանգն է: «Առաջին անգամն է, որ  
այս բանը կը լսեմ», հակադարձեց Ալիեւ:

Իրան կը պնդէ, թէ նախքան կասպից ծովու ուժա-  
նիւթի հարստութիւններու արտահանումը, գալն եզե-  
րող բոլոր երկիրներուն կողմէ ընդունելի համաձայ-  
նութիւն մը պէտք է գոյանայ: Թեհրան նաեւ դէմ է  
կասպիցի մէջ ուժանիւթի արեւմտեան ընկերութիւն-  
ներու ներկայութեան: Սակայն Ազրպէյճան արդէն  
իսկ սկսած է արեւմտեան ընկերութիւններու օժան-  
դակութեամբ կասպիցի քարիւղ արտահանել:

Անցեալ տարի Իրանի եւ Ազրպէյճանի մէջ տագ-  
նապ ծագած էր, երբ Իրանեան երկու օդանաւեր  
սպանուեցան էին Ազրպէյճանի համար պեղումներ  
կատարող բրիտանական նաւերու եւ պարտադրած  
էին անոնց կասեցնել իրենց աշխատանքը:

Ընդունելութեան ընթացքին իսթեմի նշեց, թէ կաս-  
պիցը լիճ է, եւ կը պատկանի գալն եզերող հինգ պե-  
տութիւններուն:

Միւս կողմէ, Իրանի հոգեւոր առաջնորդ Այաթու-  
լա Ալի իմամնէի յայտարարեց, թէ օտար ուժեր ար-  
գելք կը հանդիսանան կասպից ծովու կարգավիճակի  
հարցի լուծման: «Կասպից ծովու հարցը պէտք է լուծ-  
ւի երկխօսութեան միջոցով, սակայն միջազգային  
մեծ ուժեր կ'ընդգրկման շրջանային հարցերու լուծ-  
ման, ներառեալ կասպիցի հարցի լուծման», ըսած է  
իմամնէի: Ան նշած է, որ թէ՛ Իրան եւ թէ՛ Ազրպէյճան  
համոզուած են, որ կասպից ծովը խաղաղութեան,  
հասկացողութեան եւ համագործակցութեան միջոց  
մը պէտք է ըլլայ:

Իրան գտնուած միջոցին Հայտարար Ալիեւ նաեւ կոչ  
ուղղեց Թեհրանին՝ աջակցի Լեռնային Ղարաբաղի  
տագնապի լուծման: «Մենք կը հւատանք, որ տագ-  
նապը պէտք է լուծուի երկխօսութեան միջոցով, եւ  
Իրան պէտք է մասնակցի բանակցութիւններուն»,  
ըսած է Ալիեւ:

## ՈՒՍՏԻՍ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՖԱՀՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԵՐԿԻՈՂՄԱՆԻ ԵՒ ՇՐՁԱՆԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Շարաթ օր  
մեկնեցաւ Մեհուտական Արաբիա: Միտալ  
պաշտօնական այցելութեան ընթացքին Հա-  
րիրի Մեհուտական Արաբիոյ Ֆահտ Պրն Ապ-  
տէլայի թագաւորին հետ քննարկեց երկ-  
կողմանի եւ շրջանային հարցեր եւ երէկ ուշ  
գիշերին վերադարձաւ Պէյրութ:  
Միւս կողմէ, վարչապետ Հարիրի լրա-  
տու գրասենեակը երէկ հրատարակուած հա-  
ղորդագրութեամբ նկատել տուաւ, որ ոմանք  
հարցականներ կը դնեն ապապետականա-  
ցումի հարցերու գերագոյն խորհուրդին այ-  
սօրուան (Երկուշաբթի) ժողովին գծով. ժո-  
ղովին հրապարակուած էր վարչապետը,  
քննարկելու համար բջիջային հեռաձայնի  
ապապետականացումին մասին «ԷլՋ. Էս. Պի.  
Սի.» դրամատան տեղեկագիրը:  
Հաղորդագրութիւնը ընդգծեց, որ յիշեալ  
տեղեկագիրը կը հաստատէ, որ անպատաս-  
խան կը մնան հիմնական հարցերու մասին  
լուսաբանութիւններու պահանջները. հետե-  
ւաբար անհրաժեշտ է ապապետականացու-  
մի խորհուրդի ժողովին յստակացնել այդ կե-  
տերը, որպէսզի նախարարք խորհուրդը  
այս հարցի քննարկումին ժամանակ ամբող-  
ջական եւ ճշգրիտ պատկերը ունենայ եւ  
անոր հիման վրայ տայ իր որոշումը:

## ԿՈՉ

### Սիրելի՛ հայրորդներ,

Յառաջիկայ Յունիս 2ին Մեթնի շրջանի  
Յոյն Օրթոտոքս երեսփոխանական երկրորդ  
աթոռին լրացուցիչ ընտրութիւնները տեղի  
պիտի ունենան:

Ինչպէս ամէն լիբանանցի, այդպէս ալ հայ  
քաղաքացիները կոչուած են մասնակցելու  
այս ընտրութեան:

Ընտրելու իրաւունքը քաղաքացիին ամե-  
նէն նուիրական իրաւունքն է, որ ոչ ոք կրնայ  
խլել իրմէ, բացի եթէ ինք՝ քաղաքացին չօգ-  
տուի կամ հրաժարի իր այդ իրաւունքին:

Ընտրութեան թեկնածուին նախընտրու-  
թիւնը նոյնքան նուիրական է յարգելի իրա-  
ւունք է, բայց ընտրութեան մասնակցիլը հա-  
մայնական պարտականութիւն է, որ հաւա-  
քական կը դառնայ, երբ ամէն անձ իր պար-  
տականութեան կը գիտակցի:

Լիբանանահայութիւնը իր իրաւատու  
տեղը եւ արժէքը ունեցած է ընտրութիւննե-  
րու պատմութեան մէջ: Լիբանանահայու-  
թիւնը, շնորհիւ իր հաւաքական ամբողջա-  
կան մասնակցութեան եւ պարտականութեան  
գիտակցութեան, ընտրութեանց նմարին մէջ  
միշտ ալ եղած է վճռորոշ, յատկապէս Պէյրութ-  
ի ու մասնաւոր Մեթնի շրջանին մէջ:

Այս իմաստով Մեթնի շրջանի ընտրու-  
թիւնները հայութեան հետ սերտ աղերս ու-  
նեցող ընտրութիւններն են, որովհետեւ այս  
շրջանին մէջ հայութիւնը միշտ ալ իր խօսքը  
տիրականօրէն ըսած է:

Այս առիթով հայութեան բերած մասնակ-  
ցութիւնը եւ ունեցած դերակատարութիւնը  
երաշխիք են հայ համայնքին, իր պարտակա-  
նութեանց կողքին, տէր կանգնելու նաեւ իր  
համայնքային իրաւունքներուն:

Մասնակցութիւնը լաւագոյն գրասական  
է իրաւունքներու ձեռքբերման:

Ուստի, հայ համայնքի հոգեւոր պետերս  
այսու կոչ կ'ընենք մեր սիրելի ժողովուրդի  
պատկաններու, որ այս ընտրութեան եւ լի-  
բանահայտու յատուկ եւ վայել կեցուածքով,  
գիտակցութեամբ եւ հաւաքական պատասխա-  
նատուութեամբ խուռներամ եւ միասնական  
շարքերով մասնակցին եւ իրենց բուխերով  
տէր կանգնին լիբանանահայութեան իրա-  
ւունքներուն եւ արտայայտեն իրենց հաւա-  
քական կամքը:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ  
Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի  
ՀՅՅՐ ՎԱՐՉԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ  
Ընդհանուր փոխանորդ Կաթողիկէ  
Պատրիարքութեան  
ՎԵՐ. ԴՈՎՏ. ՓՈԼ ՀՅՏՈՍԹԵԱՆ  
Ատենապետ Հայ Աւետ. Միութեան  
Կեդրոնական Մարմինի

# ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Մեթնի մասնակի ընտրություններուն վեց թեկնածուները, կայանալիք տուր ընտրապայքարը, Պէյրու-թի մէջ արաբական խաղաղութեան նախաձեռնու-թի անդամ արտաքին գործոց նախարարներու հան-դիպումը, Պոուշի վարչակարգի խոստովանութիւնը, թէ անտեսած է 11 Սեպտեմբերի յարձակումներէն առաջ եղած զգուշացումները, իսրայէլեան բանակի ներխուժումը ժեմին եւ 40 պաղեստինցիներու ձեր-բակալութիւնը, Արաֆատի խոսքը, թէ կարելի չէ ընտ-րութիւններ կազմակերպել այնքան ատեն որ իսրա-յէլ կը բնագրաւէ պաղեստինեան հողերը, Ուաշինկ-թընի հակադարձութիւնը Արաֆատի, թէ պաղեստին-եան իշխանութեան ներս բարեկարգումներ կատա-րելը ոչ մէկ կապ ունի իսրայէլեան բռնագրաւման դէմ, կը կազմեն լիբանանեան օրաթերթերու շաբա-թավերջի գլխաւոր խորագիրները:

Արժարձուած նիւթերուն կարգին են նաեւ ժողու-րան թուէյնի թեկնածութիւնը իրրեւ Համախոհա-կան, ընթացիկ թղթածրարը, որ ի վերջոյ կը հասնի ապապետականացման գերագոյն խորհուրդին, ներ-թի գործոց նախարար Էլիաս Մըրի այցելութիւնը թմրեցուցիչի ապաքինման կիբոնին եւ անոր խոսքը, թէ ինք ամէնօրեայ սպառնալիքներ կը ստանայ թմրե-ցուցիչի դէմ պայքարի առնչութեամբ, «Ամալ» շար-ժումի ամբաստանութիւնը Սեյիմ Հըսի նախագահած կառավարութեան՝ մեկնելով ընդհանուր ապահովու-թեան գրասենեակի տեղեկագիրներէն, Ուաշիտ ժոմպ-լաթի արտասանած խոսքը, թէ կառավարութեան ներս իրենց ներկայութիւնը նեղացուցիչ եւ ապար-դիւն դարձած է, Շարոնի փափաքը՝ Միլին Արեւելքի վեհաժողովը թուրքոյ մէջ գումարելու եւ ՄԱԿի գո-հունակութիւնը՝ Հարաւային Լիբանանի եւ սահմա-նային «Կապոյտ Գիծ»ի վրայ կայունութիւն հաս-տատելու նախագահ Լաճուրի ջանքերուն, երեսփո-խան Պուժրու շարքի այցելութիւնը ՄՖՃՅՅ պատ-րիարքին եւ անոր խոսքը, թէ ոչ կամ կանուխ պատաս-խանատուներէն հաշիւ պիտի պահանջուի երկրին իրա-վիճակին համար:

Ներքին չեզոքով, «Սաֆիր» կ'անդրադառնայ Յուսու Մինորայի կատարած յաւելեալ արժեքի տուր-քի արժեւորումին, թէ անոր գումարը հասած է 168 միլիոն եւ 488 միլիոն լ. ոսկիի: Աշխատանքի եւ փո-խադրութեան նախարար Նեփոյ Միքայիլի վստահե-ցուցած է, թէ պիտի հետապնդէ թրիփոլի-Տննիչի ճամբու վերաշինութիւնը եւ նշած է, թէ երկրի բարե-գարգումն ու բարգաւաճումը միայն կառավարու-թեան պատասխանատուութիւնը չէ:

«Տիար» օրաթերթը Լիբանանի մէջ իրագործուող շինարարական եւ զբօսաշրջային ծրագիրներուն ակ-նարկող յօդուածով մը կ'անդրադառնայ «Սոլիտեր»ի համաձայնագիրներուն, որոնց արժեքը աւելի քան 500 միլիոն տուր է, իսկ «Լիտու» կ'իրականացնէ շուրջ 21 ծրագիր, որուն գլխաւորը Բաֆարպիէն շրջանի պանդոկներն են, որոնք կ'արժեն 303 միլիոն:

Մշակութային բաժինով, «Անուար» եւ «Պայքար» օրաթերթերը անդրադարձած են «Համազգային»ի կազմակերպութեամբ եւ Արամ Ա. կաթողիկոսի հո-վանաւորութեամբ կայացած վարուժան հիտընեանի պարգեւատրման:

«Նահար» թերթը նոյն բաժինով լուսարձակի տակ կ'առնէ Լիբանանի մէջ յայտարարուած բռնութեան դէմ պայքարը եւ այդ առիթով, կազմակերպուած մամուլի ասուլիսը: Թերթը կը տեղեկացնէ, թէ Լիբա-նանեան համալսարանը պարգեւատրած է վաստա-կաշատ արուեստագէտ Ուստիհ Ալ Սաֆին, իսկ ժողու-րան թուէյնի «Շանփիթ»ի մէջ հանդիպում ունեցած է աշխակերտներուն հետ եւ խօսած է «Պատկանելիու-թիւնն ու պարտաւորութիւնը՝ այս դժուար օրերուն» նիւթին շուրջ:

«Սաֆիր» օրաթերթը անդրադարձած է «Լուէյզի» համալսարանին մէջ տեղի ունեցած համաժողովարին, որուն նիւթին է թարգմանութիւնը եւ անոր դիմա-գրաւած դժուարութիւնները արհեստագիտութեան զարգացման այս օրերուն: Շեշտը դրուած է թարգ-մանութեան կարեւորութեան վրայ, իրրեւ միջոց գա-նազան լեզուներու, մշակոյթի միջոցով, պատմութիւն-ներու եւ ժողովուրդներու հաղորդակցութեան:

## ՇՆՈՐԱԿԱԼԻԵ

●Մարի եւ Ժան Սահակեան, տիկին Ռոզէ Խուրի եւ տըր եւ տիկին Սեդրա Պըրտեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց եղբոր եւ հարազատի՝ ԳԵՈՐԳ ՍԱՀԱԿԵԱՆԻ մահուան սուգին:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Ժոզեֆին Ասլանեան Տէր եւ տիկին տղթ՝ Մարտիրոս եւ Սոնիա Նիկոլեան Տէր եւ տիկին Մանուկ Ասլանեան եւ գաւազունք Տէր եւ տիկին Թուֆիք եւ Սիլվիա Քէյրուզ Գալֆայեան ընտանիք Ձուլքեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գովեն իրենց մոռնուողին, հօր, աներոջ, մեծ հօր եւ հարազատին՝

## ՅԱԿՈՒ ԱՍԼԱՆԵԱՆԻ (ՇՆՆԵԱԼ՝ ՊՈԼԻՍ, 1916ԻԳ)

մահը, որ պատահեալ կիրակի, 19 Մայիս 2002, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թուղբակաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 20 Մայիս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Տըրն Շըպպի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայ ընդունիլ իրրեւ մահազգ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ջարիֆ, «Թաշիտ Նախի» փողոց, «Ապու Շաքրա» շէնք, 4րդ յարկ, երկուշաբթի 20 եւ երեքշաբթի 21 Մայիսին:

# ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԱՆԳԱՍ ՍԸ ԵՄ ԶԵՇԵՑ ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՐԱԺԵՑՈՒԹԻՒՆԸ

Նախագահ զօր. էմիլ Լաճուտ երէկ առուտ Պապա-տայի մէջ հանդիպում մը ունեցաւ խաղաղու-թեան արաբական նախա-ձեռնութեան վեհաժողո-վին շարունակութեան համար Լիբանան գտնուող արաբական եր-կիրներու արտաքին գոր-ծոց նախարարներուն հետ, ընկերակցութեամբ Արաբական Լիկայի ընդ-հանուր քարտուղար Ամր Մուսայի եւ Լիբանանի արտաքին գործոց նախա-րար Մահմուտ Համմուտի:

Նախագահ Լաճուտ վստահեցուց, որ պնդե-տիւնեւիսրայէլեան տագ-նապին առնչուող որեւէ միջազգային կամ շրջա-նային շարժում, չի կրնար արդիւնաւէտ ըլ-լալ, եթէ միջազգային որոշումները չգործադր-ւին, որովհետեւ միայն անոնք է, որ կրնան ար-դար եւ ամբողջական խա-ղաղութիւնն ապահովել Միջին Արեւելքին:

Նախագահը նշեց, որ երկու ամիս առաջ Պէյ-րութի մէջ կայացած վե-հաժողովէն ընթացող շարժումներ, որոնք առաջի-նը՝ խաղաղութեան արա-բական նախաձեռնու-թիւնը, ապահոված է ան-

նախնիցաց առիթ մը աշ-խարհի բոլոր երկիրնե-րուն, որոնք հետաքրքր-ւած են շրջանին մէջ խա-ղաղութիւն հաստատելու գործընթացով:

Ապա նախագահը կոչ ուղղեց արաբ արտաքին գործոց նախարարնե-րուն, ինչպէս նաեւ Արա-բական Լիկայի ընդհա-նուր քարտուղար Ամր Մուսայի՝ Պէյրութի վե-հաժողովէն ընթացող խաղա-ղութեան նախաձեռնու-թիւնը, ինչպէս նաեւ մի-աձայնութեամբ տրուած բոլոր որոշումները մեկ-նակէտ ունենալ եւ անոնց հիման վրայ շարունակել եւ հունաւորել աւելի ուշ որդեգրուելիք կեցուածք-ները եւ ռազմավարու-թիւնները:

Նախագահ Լաճուտ ընդգծեց ներկայ ժամա-նակաշրջանին ցուցաբեր-ւելիք արաբական միաս-նականութեան անհրա-ժեշտութիւնը եւ անոնց դիմաց ծառայած հարցը՝ որ միասնութեամբ դի-մագրաւելու կարեւորու-թիւնը:

Նախագահ Լաճուտ նախարարներուն հետ հանդիպումին ընթացքին քննարկեց շրջանին մէջ արձանագրուած վերջին գարգացումները, կարգ

մը երկիրներու պետու-թիւններու հետ կատար-ւած հաղորդակցու-թիւններու արդիւնքնե-րը, Սէֆուտեան Արա-բիոյ զահաժառանգ իշխան Ապտալայի Միացեալ Նահանգներ այցելու-թիւնը, Շարմ էլ Շէյխի մէջ սուրբական — եգիպ-տական — սէուտական եռակողմանի վեհաժողո-վի արդիւնքները, ինչպէս նաեւ ներկայիս շրջանին պարզած իրավիճակին մասին միջազգային կեց-ւածքները:

Հանդիպումէն ետք ՊԱԿի քաղաքականու-թեան գրասենեակի պետ Ֆարուք Քասսուբի յայ-տարարեց հանդիպումին ընթացքին քննարկուած հարցերուն եւ տրուած որոշումներուն մասին: Քասսուբի վստահեցուց, որ զրական միջնորոտ մը կը տիրէ իրենց աշխա-տանքին եւ հանդիպում-ներուն շուրջ եւ նշեց, որ որոշ կողմերու հետ հան-դիպումներ պիտի կայա-նան: «Երբ հանդիպում-ներ կ'ըսենք, չենք քնն-նարկել Իսրայէլի, այլ՝ Եւրոպական Միութեան, ՄԱԿին, Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներուն», ըսաւ ան:

# ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ, ՊԱՍԼ ՊԷՔԻ ԵՒ ԻՔԼԻՄ ԽԱՐՐՈՒՊԻ ՄԷՉ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՆ ՔԱՂԱՔԱ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւսիսային Լիբանա-նի, Պապպէթի եւ Իքլիմ խարրուպի գիւղերու եւ գիւղաքաղաքներու մէջ երէկ կատարուեցան քա-ղաքապետական մասնա-կի ընտրութիւններ: Յիշ-եալ շրջաններէն չորսին մէջ ընտրութիւններ կը կատարուին, որովհետեւ նախապէս առանձին քա-ղաքապետութիւնը՝ բարձր: Աքքարի Մար Թումա ջերս լուծուած էր քաղա-քապետական խորհուր-դը:

Հիւսիսային Լիբանա-նի նահանգապետ Նասիֆ Քարու յայցելեց քուէար-կութեան կեդրոնները եւ հաստատեց, որ շնորհիւ բանակի եւ ներքին ապա-հովութեան ուժերու մի-ջոցառումներուն, ընտ-րութիւնները կ'ընթանան հանդարտ եւ առողջ

միջնորդութիւնով: Աքքար գաւառի Մքայլէ գիւղի քաղաքա-պետական խորհուրդը երէկ կատարուեցան քա-ղաքապետական մասնա-կի ընտրութիւններ: Յիշ-եալ շրջաններէն չորսին մէջ ընտրութիւններ կը կատարուին, որովհետեւ նախապէս առանձին քա-ղաքապետութիւնը՝ բարձր: Աքքարի Մար Թումա ջերս լուծուած էր քաղա-քապետական խորհուր-դը:

Պապպէթի գաւառին մէջ կայացան Շասսի նոր քաղաքապետական խոր-հուրդի եւ Շալիֆայի խոր-հուրդի անդամներէն հինգ հրաժարուածները փո-խարինելու մասնակի ընտրութիւններ, մինչ հանդարտ եւ առողջ

տալուն գիւղին մէջ կա-տարուեցան թաղապետի եւ թաղապետական խոր-հուրդի անդամներու ընտրութիւններ:

**ՆՇԱՆՈՒՄ**

ՀՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ  
ՖՐԵՆԿԻՒԼԵԱՆ  
ԸՆԴ  
ԱՐՄԵՆ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

Շաբաթ, 18 Մայիս  
2002

**TANIA TRAVEL**

Bodeco Square - Rue de Damas  
Tel: (02) 64655/67/7/8 - Fax: (02) 646561  
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc  
Tel: (02) 739679/82/3/4 - Fax: (02) 340473  
Website: www.taniatravel.lb.com

Տըր եւ տնօրէն  
Ժոթ  
Փեթրաքեան

## CHARTERS

<b>PALMA DE MALLORCA</b>	8 jours	\$ 720
<b>ESPAGNE, PORTUGAL &amp; MAROC</b>	7 prog. 8 à 15 jours	\$ 955 Départs tous les Mardis
<b>MARMARIS</b>	8 jours	\$ 320 Départs tous les Mardis
<b>RHODES</b>	8 jours	\$ 355
<b>MYKONOS</b>	8 jours	\$ 500 Départs tous les Lundis

**Lantern**

●Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Շեռ. 01-266866  
Ել. 03-695399

# ՄԵԹՆԻ ԸՆՏՐՈՊԱՅՔԱՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՆՈՅԹ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ

Կ'ԸՍԵ ԹԵԿՆԱԾՈՒ ՌԵՍ ՍՊՈՒ ՖԱՏԵԼ

Մեթնի յոյն ուղղափառներու երեսփոխանական ասիոնին թեկնածու Ռիստ Ապու Ֆատէլը երէկ ըսաւ, որ թեկնածութեան պաշտօնական գիր ներկայացնե-լու պայմանաժամի աւարտէն ետք պարզուած պատ-կերը այն տպաւորութիւնը կու տայ, թէ Մեթնի մաս-նակի ընտրութիւններուն ճակատամարտը ընտանե-կան բնոյթ պիտի ստանայ:

«Գաղտնիքներ չկան. երեսփոխան Միշէլ Մըրի հա-մար անակնկալ մըն էր իր եղբոր թեկնածութիւնը եւ անոր հակադարձեց թեկնածու ներկայացնելով իր դուտը. ան մարտահրաւէրին պատասխանեց այլ մարտահրաւէրով մը», ըսաւ Ապու Ֆատէլը եւ աւել-ցուց. «Անհրաժեշտ է վեր մնալ նման մտայնութիւնէրէ եւ զգայնութիւններէ, որովհետեւ ժողովուրդը զգուած է...»:

# ՊԱՆՈՍ Կ'ԱՌԱՋԱՐԿԵ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԵԱՄԵ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԸՆՏՐԵԼ ԱՊՈՒ ՖԱՏԵԼԸ

Նախկին երեսփոխան Օկիւսթ Պախոս երէկ յայտա-րարեց, որ աւելի լաւ պիտի ըլլար եթէ առնչութիւն ունեցող կողմերը Մեթնի շրջանը խնայէին եւ խուսա-փէին ընտրութեան ճակատամարտէ: Այս ծիրէն ներս, Պախոս առաջարկեց համաձայնաբար երեսփոխան ընտրել Ռիստ Ապու Ֆատէլը, որ հին խորհրդարա-նական մըն է, միջին լուծում է թէ՛ ընդդիմադիրնե-րուն, թէ՛ իշխանութեան համակիրներուն համար, իսկ վերջին երեսփոխանական ընտրութիւններուն պարտութիւն կողմներուն մէջ քուէներուն բարձրա-գոյն թիւ ստացողն էր:

Երէկ ձայնակալուած հարցազրոյցի մը մէջ Պա-խոս նաեւ ըսաւ, որ այս ընտրութիւնները դադրած են իշխանութիւններուն ընդդիմադիրներու եւ հա-մակիրներու միջեւ պայքար ըլլալէ, որովհետեւ թեկ-նածուներուն թիւին հետ իրարանցում մը ստեղ-ծուած է:

# ՆՇՈՒԵՑԱԻ ԱԼ ՊԷՐ ՄՈՒԽԱՅՊԷՐԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԸ

Երեսփոխան Ալպէր Մուխայպէրի մահուան քա-ռասուէքին առիթով, երէկ յոյն ուղղափառներու Մար էլիսա եկեղեցիին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ:

Լեռնալիբանանի յոյն ուղղափառներու առաջնորդ Ժորժ Խըտըր ընդգծեց, թէ Մուխայպէրի մեծագոյն առա-քինութիւններէն մէկը անոր պարկեշտութիւնն էր:

# ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Գարեգին Եարտըմեանի մահուան առիթով, Էշրե-ֆիէի Շայ Աւետ. եկեղեցիին եղած են ետեւեալ նուիրա-տուութիւնները.

Տըր եւ տիկին Պերճ Գիսոյեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Յովհաննէ Տըր Խայատուրեան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Օմնիկ Ալաճաճեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Ներսէ Ջուլիսեան 20,000 լ.ն., «Քուլապ» հաստատու-թիւն 30,000 լ.ն., Յակոբ Մղտեսեան 20,000 լ.ն., Յակոբ Թերզեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Յակոբ Սիլվեան 20,000 լ.ն., Կեդր. Բարձր. Վարժարան 50,000 լ.ն., տիկին Արաքսի Կարճուշեան 10,000 լ.ն., տըր եւ տիկին Գեորգ Գարապոյաճեան 10,000 լ.ն., Էլէն Սա-ղըրեան 10,000 լ.ն., տըր եւ տիկին Սամուէլ Թազաւոր-եան 10,000 լ.ն., Մալիլ Էքմէքի 20\$, Ապտէլ Մասիհ 10,000 լ.ն., Տիրան Արազարեան 20,000 լ.ն., Լեւոն Պետիկեան 10,000 լ.ն., Լեւոն Թումա 10,000 լ.ն., Ասամաք Մալիլ 10\$, Կարճեան ընտանիք 10\$, Զատարեան ընտանիք 20 \$, Կարճար Յարութ Եսայ-եան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Սիսաք Էլմայեան 20,000 լ.ն., Իսպիսաք Ֆէյրք Կատատա 20,000 լ.ն., Էլի Նաուրլ 20,000 լ.ն., Ռիթա եւ Միշէլ Եազիճի 20,000 լ.ն., Յակոբ Ալլըքեան եւ ընտանիք 50,000 լ.ն., Արեգ Սարգիսեան եւ քոյրեր 30,000 լ.ն., տըր եւ տիկին ճորճ Վարդանեան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Պետրոս Տէլիմեան 20\$, Ժան Ներսիսեան 30,000 լ.ն., Թոմի Թէյքուր 10,000 լ.ն., Կայլ եւ Փօլա Գազանեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Յակոբ Պապոյեան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Երալ Տէլիմեան 20\$, տըր եւ տիկին Կարախ Սարգարեան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Յակոբ Գաարեան 100,000 լ.ն., Կարո Քիլիսեան 30,000 լ.ն., տըր եւ տիկին Արսէ Սարաֆեան 25,000 լ.ն., օրդ. Արուս Փաշկեան 20,000 լ.ն., տղք. Գեորգ եւ Ալին Փափազեան 20 \$, Զաքէ Էլմաճեան եւ ընտանիք 50,000 լ.ն., Կեդր. եւ տիկին Նշան Պազարեան 50,000 լ.ն., տիկին Նուր Գոճատէլեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Պարգե Գերպապեան 5,000 լ.ն., տըր եւ տիկին Յարութին Յովսէփեան 15,000 լ.ն., տըր եւ տիկին Սողոմոն Սարմազեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Փօլ եւ Անի Գաբրիէլեան 20,000 լ.ն., Սորիս Էլ Անմար 20,000 լ.ն., տըր եւ տիկին Փօլ Եազուպեան 20,000 լ.ն., Սուլան Տարլիսկ 25,000 լ.ն., տըր եւ տիկին Բաֆֆի Թորիկեան 20,000 լ.ն., օրդ. Սոնա Նաշեան 20 \$, տըր եւ տիկին Սիիրան Գարապաճեան 20,000 լ.ն., Հոփիսիմեանց վարժարան 20,000 լ.ն., Էլի ժարուշ 20,000 լ.ն., Զաւեն Սարլեան 20,000 լ.ն., Արմեն եւ Պերճ Տաքեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Ղազար ճերահեան 20,000 լ.ն., Վաշէ Գեքմէյեան 20 \$, Անդրա-միլ Չոլապեան 20,000 լ.ն., տըր եւ տիկին Սովստ Գարապաճեան 20,000 լ.ն., Էլիսա Սուրաղիի այրին եւ ընտանիք 50,000 լ.ն., տիկին Սօսի Պալեան եւ զաւակուրք 30,000 լ.ն., Տուտեան ընտանիք 50,000 լ.ն., Կարճարեան Թերզեան 30 \$, HUWA 50,000 լ.ն., Եաղազեան Յարութին 20 \$, տըր եւ տիկին Յարութին Չոլապեան 30,000 լ.ն., տըր եւ տիկին Սազօ Արմեան 30,000 լ.ն., տըր եւ տիկին Վազգէ Գեքմէյեան 25,000 լ.ն., տըր եւ տիկին Վարուժան Ներմէքեան 25,000 լ.ն., տըր եւ տիկին Յարութին Գարապաճաքեան 25,000 լ.ն., Անթուան եւ Ժան Շըմիլ 30,000 լ.ն., Պասսաճ Կատատա 20,000

# ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԱՏԱՌՈՂՋ ԵՐԵՒՈՅԹ Է

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՖԱՐՄԱՆ

Պետական նախարար Միշել Ֆարաոն երէկ յայտարարեց, որ ապապետականացումները կատարելու որոշումը անդամայի է:

«Բիջիլային հեռաձայնի ապապետականացման հարցը պիտի լուծուի մօտ օրէն եւ այս թղթածրարը նահանջ չէ արձանագրած, մանաւանդ որ իշխանութեան պետերը վճռած են ետդարձ չընել», ըսաւ ան:

«Իշխանաւորներուն միջեւ տարակարծութիւնները վատառողջ երեւոյթ է եւ անհրաժեշտ է անոնց միջեւ գործակցութիւնը, որովհետեւ անիկա է երկրին կայունութեան երաշխիքը», ըսաւ ան:

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած կառավարութիւնը առայժմ անփոխարինելի է, իսկ առկաի հարցերը, օրինակի համար՝ բիջիլային հարցը, պիտի լուծուին մօտ օրէն, ըսաւ Ֆարաոն, յայտնելով, որ այս առնչութեամբ տարակարծութիւնը փոխանցման շրջանին չուրջ է, իսկ մնացեալ կէտերուն շուրջ համաձայնութիւն գոյացած է:

# ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՍԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Երէկ՝ Կիրակի 19 Մայիս 2002ին, Մեծի Տանն կրկնկրոյ Արամ Ա. կաթողիկոսի օրհնութեամբ եւ Եփրեմ արք. Թապազեանի ձեռնամբ, հինգ արեղաներ՝ Մասին Չօպուլեան, Սիփան Քէչէճեան, Վարդաթօփալեան, Ներսէս Մերճանեան եւ Յուսիկ Մարտիրոսեան, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յընթացս պատարագի արժանացան վարդապետական Մասնաւոր իշխանութիւն:

Նշենք, որ Հինգշաբթի 16 Մայիսի երեկոյեան, տեղի ունեցած էր հինգ արեղաներու թէգերու պաշտպանութիւնը, հարցաքննութեամբ Տիրայր եպ. Փանոսեանի, Վարդան արք. Տեմիրճեանի եւ Եփրեմ արք. Թապազեանի, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսի:

### ՀԵՀՈՄ

# ԴԱՍԱՆՈՍՈՒԹԻՒՆ՝ «ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ» ՆԻՒԹԻՆ ՇՈՒՐՋ

Շաբաթ, 18 Մայիսի երեկոյեան ժամը 6:30ին, կազմակերպութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայ Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ), Միութեան Անթիլիասի կեդրոնատեղիին մէջ անդի ունեցաւ դասախօսական հանդիպում՝ «Լիբանանահայ գաղութը եւ իրաւաբանքի երկուսարդուրիւնը» նիւթին շուրջ: Հանդիպման սկիզբը ՀԵՀՈՄի վարչութեան անդամ Մարալ Չոլոյեան իր բացման խօսքով անդրադարձաւ լիբանանահայ երիտասարդութեան դիմագրաւած տագնապներուն եւ անոնց լուծման անհրաժեշտութեան:

Ապա ան ներկայացուց օրուան դասախօս՝ Համազայինի հրատարակչատան տնօրէն եւ Հ. Յ. Դ. Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչ Յակոբ Հաւաթեանը, որ անդրադառնալով լիբանանահայ երիտասարդութեան դիմագրաւած այժմու տագնապին, ըսաւ, որ այս տագնապը սկսած է 1975էն 1991 լիբանանեան պատերազմի ընթացքին, երբ պատերազմին պարտադրած պայմաններուն պատճառով, ինչպէս Լիբանանի բոլոր համայնքները, նոյնպէս լիբանանահայութիւնը եւ մասնաւորապէս Հայ երիտասարդութիւնը եւ ուսանողութիւնը ստիպուեցան կ՛փոխել իրենց «նեղ» շրջապատին մէջ՝ ինքնապաշտպանուելու եւ ինքնակազմակերպուելու համար:

Պատերազմի աւարտը նոր մարտահրաւէրներու դուռ բացաւ Հայ երիտասարդութեան առջեւ: Լիբանանեան գանազան երկրները իրարմէ բաժնող նախկին ճակատները վերցուեցան եւ իւրաքանչիւր համայնքի դիմաց ճամբները բաց էին այլեւ չփոխելու այլ համայնքներու գաւակներուն հետ: Ասիկա լիբանանահայ երիտասարդին դիմաց դիւրացուց իր շրջապատին անջատուելու եւ ուժացումի երեւոյթը:

Յ. Հաւաթեան շեշտը դրաւ լիբանանահայ երիտասարդութեան կազմակերպ կեանքի անհրաժեշտութեան վրայ: Ան յայտնեց, որ երիտասարդութիւնը իր այսօրուան տագնապներէն չի կրնար ձեռքազատուիլ, եթէ չառաջնորդուի հաւաքական մտահոգութիւններով եւ հերոսութիւն լիբանանահայութեան քաղաքական, հասարակական, մշակութային, կրօնական, մարզական եւ բարեսիրական կազմակերպութիւններուն շուրջ:

Օրուան բանախօսը անդրադարձաւ նաեւ լիբանանահայութեան քաղաքական իրաւունքներու պաշտպանութեան հարցին: Այս ծիրին մէջ ան շեշտը դրաւ երիտասարդութեան աշխուժ եւ գիտակից դերակատարութեան վրայ, մանաւանդ երեսփոխանական ընտրութիւններուն եւ ի մասնաւորի Մեթնի 2 Յունիսի մասնակի ընտրութիւններուն սեմին:

Հանդիպման աւարտին դասախօսը պատասխանեց ներկայներուն հարցումներուն:

# ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ՝ ԸԱՍԱՀՊԱՅԻՆԻ «ՔՆԱՐ» ՊԱՐԱԽՈՒՄԻ ԵՐԱՆՏԱԻՈՐՆԵՐՈՒՆ

Անցնող շաբաթավերջին սկսան Համազայինի «Քնար» պարախումբին տարեկան ելոյթները, որոնք նաեւ կը նշեն պարախումբին հիմնադրման 45ամեակը:

Այդ ծիրէն ներս, Կիրակի, 19 Մայիսին, «Մոնօ» թատերասրահին մէջ «Քնար» ներկայացուց լատուկ ելոյթ մը, որուն ներկայ գտնուեցան Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ Եպ. Խաչերեան, Հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան Եպ. Ազարեան, երեսփոխան ձորձ Գասարճի, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիրոսեան, «Քնար»ի վեթեաքներ եւ արուեստագետներ:

Պարախումբի յայտագիրին աւարտին, Համազայինի պարախումբի միաւորին անուսով խօսք առաւ Մարալ Շամլեան - Թուրումեան, որ բեմ հրաւիրեց «Քնար» պարախումբի հիմնադիր Վոյզին՝ տոքթ. Վարդգէս Ելկանին Արրահամեաններու դուստրը՝ Նելի Արրահամեանը, ինչպէս նա-

եւ անցնող տասնամեակներուն ընթացքին իբրեւ վաստակաւոր պարուսոյց՝ «Քնար»ին վերելքին մէջ կարեւոր սպասու ներդրում ունեցած Ժիրայր Եսայեանի կիներ՝ Ենիկէ Եսայեանը, պարուսոյցներ Պետիկ Ծառուկեան, Գարինա Իշխանեան - Ալեքսանտրեան, ներկայ պարուսոյց Ֆելիք Յարութիւնեան եւ «Քնար»ի տարազներու ձեւաւորման պատասխանատու Կարինէ Ալեքսանտրեանի դուստրը՝ Նայիրի Ալեքսանտրեան - Կեօպիպէօյիքեանը: Իր խօսքին մէջ Մ. Շամլեան - Թուրումեան ըսաւ, որ «Քնար»ի նման պարախումբ մը հիմնելու երաշխարկանացած է շնորհի խումբ մը նուիրեալներու կամքին եւ անսակարկ աշխատանքին: «Համազայինի պարախումբը եղած է այն բախտաւոր միաւորը, որ անդադրում ունեցած է իր հիմնադիրներուն գործը շարունակող նուիրեալներ», ըսաւ ան եւ այս իրողութեան իբրեւ վկայութիւն՝ աւելցուց, որ 13 տարիէ ի վեր գործող «Գայեանէ» պարի դպրոցը արդէն իսկ հասցուցած է քնարականներու սե-

րունդը: Ան նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր «Քնար»ականներուն, որոնց ճիգին շնորհի պարախումբին 45ամեայ կեանքը պակասած է յաջողութեամբ: Ապա խօսք առաւ Գեղամ Եպ. Խաչերեան, որ վեր առաւ լիբանանահայ հոգեմշակութային կեանքին մէջ «Քնար»ին խաղացած դերը, որուն շնորհի «նոր սերունդը պիտի շարունակէ իր մէջ պահել հայ մշակութային մեկանքաժան մասնակի պարը»: Ան գնահատեց բոլոր այն անհատները եւ բարեկամները, որոնք բեմերուն վրայ, բուլիսներու ետին եւ նոյնիսկ արահէն ներս աշխատելով՝ «Քնար»ին պարգեւեցին բեղուն կեանք մը:

Համազայինի Լիբանանի Շրջանային վարչութեան անուսով, ձեռնամբ Առաջնորդ արքեպիսկոպիտ Վարդապետ Կարինէ Ալեքսանտրեանը, որ անդադրում ունեցած է իր հիմնադիրներուն գործը շարունակող նուիրեալներ», ըսաւ ան եւ այս իրողութեան իբրեւ վկայութիւն՝ աւելցուց, որ 13 տարիէ ի վեր գործող «Գայեանէ» պարի դպրոցը արդէն իսկ հասցուցած է քնարականներու սե-

# ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԻ ԵՒ ՄԱՐԻՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԱՐՈՒԵՍԸ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Հեղինակային երգն ու երաժշտութիւնը վերջին տասնամեակներու հայ մշակութային կեանքի մէջնէն ցայտուն երեւոյթն է: Այս տիպի երաժշտական ստեղծագործութիւն անտարակոյս իր բուն սիրահարները պիտի ունենար Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին եւ գեղարուեստական նոր երանգ պիտի հաղորդէր մշակութային արդէն իսկ մամլոցած կեանքին:

Այս ծիրին մէջ, գեղարուեստական հաճոյքի անգրեզական պահեր ստեղծեց «Նաճ» Վ. Քլայպի կազմակերպութեամբ երէկ,

երեկոյեան ժամը 20:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ տեղի ունեցած հայրենի հեղինակային երգի վարպետներէն Վահան Արծրունիի եւ Մարինա Արծրունիի եւ Մարինա Յովհաննիսեան - Արծրունիի գեղարուեստական երեկոն:

Շուրջ երկու ժամ տեւած երեկոյի ընթացքին, Վահան Արծրունի՝ Ռազմիկ Դաւոյեանի եւ Կոմիտասի բանաստեղծական ստեղծագործութիւններուն հիման վրայ յորինւած երգարուեստ ներկայացուց: Նկատելի էր Վահան - Մարինա զոյգի ներդաշնակութիւնը՝ եր-

գի եւ ասմունքի զոյգ մարգերուն մէջ: Մարինա Արծրունի, որ կը նկատուի Պարոյր Սեւակի բանաստեղծական ստեղծագործութիւններու լաւագոյն մեկնարաններէն, նաեւ ներկայացուց երկու շարքերի եւ Յովհաննիսեանի ստեղծագործութիւններէն:

Հեղինակային երգարուեստի սիրահար եւ մշակութասէր լիբանանահայ հասարակութիւնը գոհունակ սրտով մեկնեցաւ սրահէն:

### ԻՐԱԸ

# ՈՒՏԱՅ ՀԻՒՄԵՅՆ ԽՍՏԻԻ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ

Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի անդրանիկ պալատը Ռուսայ խիստ ոճով յարձակում մը գործեց Միացեալ Նահանգներուն դէմ, որոնք կը սպառնան ահաբեկութեան դէմ միջազային պատերազմին ծիրին մէջ դնել նաեւ Իրաքը: Ռուսայ ըսաւ, որ Ռաշիդիքի կեցուածքը կը փաստէ, թէ Վիետնամի պատերազմէն ի վեր, կարգ մը երկիրներու հանդէպ իր վերաբերումը որեւէ փոփոխութիւն չէ արձանագրած:

Ռուսայ, որ առաջին անգամ ըլլալով կը խօսէր ամերիկեան սպանալիթին մասին, ըսաւ, որ Ռաշիդիքը պիտի յաջողի Իրաքը հակակշիռ տակ արձնելու իր ճիգերուն մէջ: Ան աւելցուց, որ ամերիկացիները պիտի չկարենան մէկ կամ երկու տարուան մէջ փոփոխութիւններու ենթարկել Իրաքը, որովհետեւ 12 տարիէ ի վեր կը փորձէ, սակայն ապարդին: Ան յայտնեց նաեւ, որ ամերիկեան քաղաքականութիւնը յիսունական թուականներէն ի վեր չէ փոխուած: Այն ատեն թիրախը Վիետնամն էր, իսկ հիմա՝ Աֆղանիստանն ու այլ թէկնածուներ: Ռուսայ ըսաւ, որ ամերիկեան ուժերը հիւանդանոցներ, Կարմիր խաչի կեդրոններ ու այլ ոչ պիւտրական թիրախներ ուղարկուած են Աֆղանիստանի մէջ:

Միւս կողմէ, փոխ նախագահ Թահա Եսաիւն Ռամստան Շաբաթ օր յայտնած է, թէ կ'ակնկալէ, որ Միացեալ Նահանգներ յարձակում գործեն Իրաքի վրայ՝ տապալելու համար Պաղատի իշխանութիւնը՝ ինչ ալ ըլլայ Իրաքի պատասխանը ՄԱԿի պէնքի քննիչներուն վերադարձին մասին:

Ռամստան աւելցուց, որ Պաղատ ընդունեց ՄԱԿի պատմաիջոցներուն վերատեսութեան ենթարկուած ծրագիրը, որովհետեւ անիկա լաւագոյն համաձայնութիւնն էր, որուն գծով համախոհութիւն յայտնած էին Ապահովութեան խորհուրդի բոլոր անդամները: Ռամստանի դիտելի տուաւ, սակայն, որ ամերիկեան կառավարութիւնը Իրաքի դէմ յարձակումը պիտի գործէ, երբ պահն ու պայմանները յարմար նկատէ, եւ երբ անբողջութեամբ համապատասխան ըլլայ, որ գործողութիւնը իր հետապնդած թիրախը պիտի նուաճէ:

(ՌՈՅԹԸՐՋ)

## ԸՆՏՐԱՔԱՐՏԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական քարտի:

Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական քարտ չունին, կրնան դիմել Ը. Յ. Դ. հետեւեալ ակումբները.

- ՊԷՅՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ. Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924
- ՌՈՍՏՈՒՄ ակումբ - Շայաշէն՝ 01/328471
- ՆՇԱՆ Փալանճեան ճեմարան - Արեւմտեան Պէյրութ՝ 01/375412
- Տիրապետ Սարապի՝ 01/580141
- ՖԱՆԱՐԻ ԵՒ ԱՍՈՒՏԱՅԻ ՇՐՋԱՆ. Է. Ակունցի ակումբ - Ֆանար՝ 01/891546
- ՌԱՈՒՏԱՅԻ ակումբ - 01/683372
- ՄԼԹԻԼԵՍԻ ՇՐՋԱՆ. Աղբալեան ակումբ՝ 04/722902
- Նաքալի կեդրոն՝ 04/410691
- Փուլի ակումբ՝ 09/933096
- ՉԱԼՔԱՅԻ ՇՐՋԱՆ. Գարեգին Նժդեհ ակումբ՝ 01/877661
- ՆԱԿՐ ՄՈՒԹԻ ՇՐՋԱՆ. Անի ակումբ՝ 01/895481
- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՇՐՋԱՆ. Սարդարապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949
- ՌՈՒՔԵՆ ակումբ - Նորաշէն՝ 01/254322
- Դրօ ակումբ - Արագած՝ 01/268647
- Ազիտեան ակումբ - Սիւս՝ 01/261636
- Քաղաքապետարանի շէնքեր - «Բաբգէն Սիւնի» կեդրոն՝ 01/489477
- Թեյիքեան ակումբ - Ամանոս՝ 03/587498
- Մար Եուսէֆի ակումբ՝ 01/254709
- Սիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912
- Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Ը. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ  
ԿԵՂՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ

We Give Services.  
... Not Just Policies

AFHIL

OUR HEALTH AND YOURS  
DON'T SMOKE

FOR THE SAKE OF  
OUR NERVES AND YOURS  
KEEP SILENT

WATCH OUT!  
BABY ON BOARD

DRIVE SAFELY

Աֆիլ Շիֆ ԸՍԳ, Բ. Յարկ, Գե. Ե. Ֆալու. (01) 262231 242556 242557  
Imm. AFED. 2ème étage. Tél. and Fax: (01) 262231 - 242596 - 242597

NARRA TRADING  
& GENERAL SERVICES CO. S.A.R.L.  
ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.  
(Սեփականատը՝ Վահէ Մանուկեան)

ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊՈՒՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԵԱՅԵՆ ԵՒ  
ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍԻԻԿԻՆԵՐՈՒ ԱՊԱՆԿՈՎՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր ճշգրտաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պառնիք, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989



# ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

# «ԲԱԿԻՆ»Ի

(ՀԱՆՂԵՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ) ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Տոբեթոր եր. Խաթանասան, որ մտած էր թեևս, ըսաւ. - Ինչո՞ւ չարքերը չմտնես, Գեղարք, եւ չարքը կը լուծուի ինքնին: Վարուժաններու, Սիւսանիաներու ստեղծագործութիւնը շահեցա՞ւ, թէ տուժեց շարքային - յեղափոխականի իրենց կեանքով:

- Շարքը այդ պարունակին մէջ չի տրուիր այս պարագային, սիրելի բժիշկ: Ժամանակին (տասնըօրէն տարի մը առաջ) Պատանեկան Միութեան հերթը եկած էր շարքերը անցնելու, երկու բարձրաստիճան պատասխանատուներ սրտացուօրէն ըսին ինքի- «Քեզ լաւ կը ճանչնանք. դու ղուրը կենալով աւելի օգտակար կ'ըլլաս մեզի, եւ աւելի ժամանակ կրնաս յատկացնել գրական - մտաւորական աշխատանքներու»: Որովհետեւ ես անսակարկ եւ անշահախնդիր ծառայելիք անդին ակնկալութիւններ չունէի, չունիմ նաեւ հիմա: Եւ ըսել չեմ տար, որ «Բագին»-ի արտոնագրութիւնը կորցուցու համար Գեղարք մտաւ շարքերը: Մի վրդովիր, տոբեթոր, լուծում մը կը գտնենք շուտով:

Գիշերը դրի - վերցուցի ես ինքի:

Առաւտուն, սովորականին պէս, Ա. Մահակեան հանդիպեցաւ դարմանատուն:

- Ես ձեւ մը գտայ, - ըսի իրեն, - տոբեթ. վարուժանը (իր գաւակը) ինքն ալ իրաւունք ունի արտոնագիրը առնելու: Ես կը դառնամ «Բժիշկ»ի, իսկ ինք կ'ըլլայ «Բագին»-ի արտոնատէր: Առարկելի կէտ չի մնար այլեւս:

Պահ մը մտածեցի մէջ թաղեցաւ, ասաւ.

- Ո՛չ, այդ ձեւով լուծում մը կարելի չէ, - ըսաւ վճռական եւ գլուխը առաւ դիմաց:

Անորոշութիւն տիրեց քանի մը օր: Ապա «վերջին» առնուած որոշումով՝ Ա. Մահակեան կրկին հանդիպեցաւ ինքի ժպտեցին:

- Գնա՛, պէտք եղած պաշտօնական ձեւակերպութիւններուն դիմէ եւ «Բագին»-ի արտոնագիրը առ թու անունիդ:

Ուրիշ ոչ մէկ պայմանագիր, համաձայնագիր, միայն ու միայն բարոյական ամուր կայ:

Նոյն օրն իսկ, յարմար ժամու, գացի պետական սպասարկութեան մամուլ յատուկ գրասենեակը (Մեծ Սերայը՝ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ դիմաց): Պատասխանատու ստուգեց հանգամանքս, ձեռքը առաւ, պահ մը յամեցաւ մամուլ անդամատորիս վրայ:

- Լա՛ւ, - ուլթուն էջ, գրական ամսագիր, հայերէն... կարելի է անունիդ գրանցել: Միայն թէ նախ՝ հինգ հարիւր լրբանանան պիտի պակեցընես սնտուկին:

- Սիրով, - ըսի, - եւ հինգ կտոր հարիւրնոց դրի իսկոյն սեղանին վրայ:

Ժպտումով վերցուց, ապա յարեց քաղցրածայն.

- Իսկ ի՞նչ անուն պիտի կրէ այդ հանդէսը: - «Բագին», - յարեց իսկոյն: - Պէ՛տք է. կրկնեց զարմանահար եւ աչքերը կկոցելով. - բայց ի՞նչ կայ ունիք Ձինաստանի մայրաքաղաքին, համայնավարներուն հետ... Խնդրեցի, եւ ուղղեցի: - Պէ՛տք է չէ, այլ «Բագին», շատ հեռու ձեռք կասկածէն ու մտածումէն: - Ի՞նչ իմաստ ունի այդ բառը հայա... - Հայերէն կը նշանակէ օթել, - ըսի (այն օրերուն Ֆրանսերէնը առաջին կարգի, գրեթէ պետական լեզու էր տակաւին Լիբանանի մէջ եւ արաբերէն լաւ չի օսելու համար ոչ ոք կը կշտամբէր զիս...): - Օթել... պանդո՞կ ըսել կ'ուզես: - Ո՛չ, ո՛չ, կը գրուի Autel, այսինքն գոհասեղան, սրբալի: Կ'ուզենք գոհարուել Մշակոյթին եւ Արուեստին («Հայ» մակդիրը չաւելցուցի... դիւանագիտութեամբ, փափկանկատութեամբ): - Հիմա եղա՞ւ, հիմա հասկցայ, - ուրախացաւ եւ ինքն ալ խնդրեց «խստապահանջ» տնօրէնը, երկու ամբողջ իրարու զարնելով:

Ստորագրեց, ստորագրեցի գրագիրին պատրաստած պաշտօնաթուղթերը: Արտոնագիրն ու ստացագիրը դրի գրպանս, ելայ ոտքի ու սեղմեցի ձեռքը.

- Շնորհակալութիւն: - Ալլահ մաաք, յաջողութիւն, - ըսաւ սրտանց: - Ալլահ բիհֆազաք, - պատասխանեցի այդքան մը արաբերէնի եւ յանկերգի վարժ ըլլալով: ... Արտոնագիրէն ետք պարտականութիւն տրուեցաւ ինքի գտնել հաւաքատեղի - խմբագրատուն մը:

Վարձու առի թերզեաններու շէնքին վարի յարկը, Ֆարառնի ապարանքին մեծ դարպասին դիմացը, Ժ. Յ. Դ. ակումբէն ոչ հեռու:

Միաժամանակ ոգի իր ընդ լծուեցանք աշխատանքի եւ առաջին թիւը ունէինք արդէն, բաւական մըն ալ «Բագին»-ի պաշար, երբ ի յայտ եկան նոր դժուարութիւններ:

Սակայն շուտով վերակայանք գործի կայծակնային թափով: Փոյ ծիրակոսեան գծեց առաջին կողմը: Ծեմարանաւարտ կրտսեր բարեկամներէս Մակար Պալլազեան, որ արդէն կը պատկերաբար դէր ինքի «Բժիշկ»-ի էջերը, պատասխանեց «Բագին»-ի գարդազար - խորագիրը, որ առի հետեւողութիւն եւ կայ կը պահուի մինչեւ այսօր:

Եւ վերջապէս լոյս տեսաւ «Բագին»-ի առաջին թիւը Յամի Տեառն 1962-ի Յունուարին:

Ցնծութեան մէջ էինք ըլլորս՝ բաժակն ի ձեռքին.

- Տասը տարի՛ ապահով է այս ձեռնարկին կեանքը, - երաշխաւորեց

4. Սասունի ինքնավար տահ իր խօսքին մէջ: Եկեղեցիէն առած վառ ու լուսաճաճանչ մոմի պէս, ներկաներէն իւրաքանչիւրը առաւ օրինակ մը, շտապեց տուն: Ու հակառակ, որ քաղ տեղեակ էինք բովանդակութեան՝ էջերը դարձուցինք կրկին ու կրկին, մինչեւ ուշ գիշեր, քաղցրայոյզ խոսովքով:

... 4. Սասունի գուշակութիւնը քառապատկով անցած է այսօր նախատեսուած սահմանը:

Այս չորս տասնամեակին ելեւէջներ ունեցաւ «Բագին»ը, անցաւ առնչուական լեզու էր տակաւին Լիբանանի մէջ եւ արաբերէն լաւ չի օսելու համար ոչ ոք կը կշտամբէր զիս...): - Օթել... պանդո՞կ ըսել կ'ուզես: - Ո՛չ, ո՛չ, կը գրուի Autel, այսինքն գոհասեղան, սրբալի: Կ'ուզենք գոհարուել Մշակոյթին եւ Արուեստին («Հայ» մակդիրը չաւելցուցի... դիւանագիտութեամբ, փափկանկատութեամբ): - Հիմա եղա՞ւ, հիմա հասկցայ, - ուրախացաւ եւ ինքն ալ խնդրեց «խստապահանջ» տնօրէնը, երկու ամբողջ իրարու զարնելով:

Ստորագրեց, ստորագրեցի գրագիրին պատրաստած պաշտօնաթուղթերը: Արտոնագիրն ու ստացագիրը դրի գրպանս, ելայ ոտքի ու սեղմեցի ձեռքը.

- Շնորհակալութիւն: - Ալլահ մաաք, յաջողութիւն, - ըսաւ սրտանց: - Ալլահ բիհֆազաք, - պատասխանեցի այդքան մը արաբերէնի եւ յանկերգի վարժ ըլլալով: ... Արտոնագիրէն ետք պարտականութիւն տրուեցաւ ինքի գտնել հաւաքատեղի - խմբագրատուն մը:

Վարձու առի թերզեաններու շէնքին վարի յարկը, Ֆարառնի ապարանքին մեծ դարպասին դիմացը, Ժ. Յ. Դ. ակումբէն ոչ հեռու:

Միաժամանակ ոգի իր ընդ լծուեցանք աշխատանքի եւ առաջին թիւը ունէինք արդէն, բաւական մըն ալ «Բագին»-ի պաշար, երբ ի յայտ եկան նոր դժուարութիւններ:

Սակայն շուտով վերակայանք գործի կայծակնային թափով: Փոյ ծիրակոսեան գծեց առաջին կողմը: Ծեմարանաւարտ կրտսեր բարեկամներէս Մակար Պալլազեան, որ արդէն կը պատկերաբար դէր ինքի «Բժիշկ»-ի էջերը, պատասխանեց «Բագին»-ի գարդազար - խորագիրը, որ առի հետեւողութիւն եւ կայ կը պահուի մինչեւ այսօր:

Եւ վերջապէս լոյս տեսաւ «Բագին»-ի առաջին թիւը Յամի Տեառն 1962-ի Յունուարին:

Ցնծութեան մէջ էինք ըլլորս՝ բաժակն ի ձեռքին.

- Տասը տարի՛ ապահով է այս ձեռնարկին կեանքը, - երաշխաւորեց

## ԹԻՖԼԻՍ

### ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ԵԼԵՒՍՈՒՏՔԻ ԵՒ ԱՌԵՏՈՒԹԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան հովանաւորութեամբ, 21 - 22 Մայիսին Թիֆլիսի մէջ տեղի պիտի ունենայ Հարաւային կողմից եւ Կեդրոնական Ասիոյ երկիրներու տնտեսութեան, ելեւմուտքի եւ առեւտուրի նախարարներու միջազգային խորհրդաժողով:

Խորհրդաժողովին նպատակն է երկու շրջաններու բազմակողմանի առեւտրական համակարգին մէջ այդ խնդրին լուծման համար անհրաժեշտ քեքքիք օգնութեան չափերու եւ ուղղութիւններու սահմանումը:

Թիֆլիսի խորհրդաժողովին այլ երկիրներու կարգին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստան:

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՇԱԿՆԵՐ

### ՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱՆՈՒՄՔԻ ՀԻՒՐԱՆԱԳՆԵՐ

14 Մայիսին Ֆրեզնոյի մէջ տրուած վերջին նուագահանգիստով Միացեալ Նահանգներու մէջ իր հիւրախաղերը աւարտեց Արամ Ղարաբէկեանի ղեկավարած Հայաստանի Պետական սենեկային նուագախումբը: Ֆրեզնոյի մէջ խումբը նուագած է նաեւ 13 Մայիսին՝ իր մասնակցութիւնը բերելով Ուիլիսոմ Սարոյեանի նուիրուած փառատօնին:

Միացեալ Նահանգներ հիւրախաղերու մեկնել առաջ խումբը նուագահանգիստներ տուած է նաեւ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ:

Միացեալ Նահանգներու մէջ նուագախումբը իր նուագահանգիստները սկսած է Լոս Անձելիսէս՝ նուագելով քաղաքին շքեղ սրահներէն մէկուն մէջ: Երաժշտասերներ ունկնդրած են Էտուարտ Միլիպիանի, Կրիկի, Ռուբին Ալթունեանի եւ Շթրաուսի ստեղծագործութիւններէն: Նուագախումբը նուագահանգիստ մը տուած է նաեւ Սան Ֆրանցիսքոյի մէջ:

### ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԾԱԽԱԼՆԵՐՈՒ ԱՃՎԱՆԱԶՈՐԻ ՄԷՋ

Ըստ վաճառորի վիճակահանութեան բաժանմունքի մասնագէտներու ուսումնասիրութիւններուն, վերջին քանի մը տարիներուն օրինաչափութիւն դարձած է, որ արդիւնաբերութեան արտադրութեան ծաւալները վաճառորի մէջ տարուէ տարի աւելնան:

Համախառն արտադրանքը նախորդ տարուան նոյն ժամանակամիջոցին 401 միլիոն դրամէն հասած է 410 միլիոն տոյրին: Ապրանքային արտադրանքի ծաւալին մէջ մեծ է թեթեւ արդիւնաբերութեան տեսակարար կշիռը (35,7 առ հարիւր), անկէ ետք կու գայ սնունդի արդիւնաբերութիւնը՝ 30,7 առ հարիւր, եւ մեքենայինութիւնը՝ 22,6 առ հարիւր:

Ըստ ճիւղերու, մեծագոյն աճը արձանագրուած է սնունդի արտադրութեան մարզին մէջ (126 միլիոն, 46 միլիոնի փոխարէն), համեմատաբար աճ, արձանագրած են նաեւ քիմիական արդիւնաբերութեան արտադրութեան ծաւալները:

### ԳԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱԼԵ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Այս տարուան գարնան գիւղատնտեսական արտադրութեան աճը ապահովելու նպատակով, Հայաստանի պետական պիւտճէէն 259,6 միլիոն դրամ յատկացուած է առնչտներու, մարախներու եւ ծղրիթներու, ինչպէս նաեւ աւելի վնասակար անասուններու եւ հիւանդութիւններու դէմ աւելի քան 38 հազար հեկտարի վրայ պայքարի աշխատանքներ կատարելու նպատակով:


Ըստ Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան ընդհանուր պաշտպանութեան հանրապետական կայանի տնօրէն Մկրտիչ Դանիէլեանի, այդ աշխատանքներուն իրականացման համար արդէն ձեռք բերուած է 6 թոն թոյն:

Բոյսերու պաշտպանութեան մարզային մասնագէտներու միջոցով ներկայիս մասնագիտական հսկողութիւն կ'իրականացուի թոյնի գործածութեան քանակի սահմանման, կիրարկման: Ժամկէտերու եւ անվտանգութեան կանոններու ապահովման ուղղութեամբ:

**ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ**  
**VIDEO ԿԱՍ CDR ԿՐԱՅ**  
**VIDEO CLIPՆԵՐ**  
**ԱՆՁԻ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ**  
 Դիմել՝ ԱՐԱ ԷԷԷԷԷԱՆ ՀԱՍՏ.  
 Հեռ. 01 / 261696, 03 / 250518

## ԳԻՐԵՐՈՒ ՇԵՏ

### «ՄԱՐԴԸ ՈՐՊԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»



Արդի Կարաբեկյանի «Մարդը որպէս Բարոյական Իրականութիւն» գիրքը, բարոյական անկումները դիմագրաւող ներկայից քաղաքական արժեքներու խախտումէն: Այս իրականութիւնը տագնապեցուցած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն Գրիգոր վրդ. Չիֆթեանը, որ նախաձեռնած է բարոյագիտական եւ կրօնագիտական գիրքերու պատրաստութեան: Ան իր եկեղեցական պատասխանատուութիւններուն առնաբեր (ան ներկայիս խմբագիրն է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ»-ի, վարիչն է կաթողիկոսարանի տեղեկատուութեան բաժանմունքին, նաեւ կը դասաւանդէ Պիթքայայի դպրեվանքին մէջ) կը կատարէ գրական աշխատանք՝ յատկապէս դաստիարակչական բնոյթով գրականութիւն մշակելով:

Անցնող տարիներուն ան պաշտօնով դասաւանդած է նաեւ Քալիֆորնիոյ հայկական վարժարաններուն մէջ, ուր հաղորդուած է նոր սերունդի մեր գաւակներուն հետ, զգացած է անոնց տագնապները, զանոնք չարչրկող գաւազակ հարցերը, եւ ի պատասխան այդ ամենուն՝ պատրաստած է հոգեբանական եւ մանկավարժական թեմայով գիրքերու շարք մը: Ինչպէս ըսինք, առաւելաբար բարոյագիտական խնդիրներու արժանաւորումն է իր նիւթը, որով իրարու դէմ կը հանէ բարին ու չարը, լաւն ու վատը, ճշմարիտն ու կեղծը: Կրկնապէս հաստատումներ, ընկերութեան մէջ տեսնուած յոռի բարքերու վնասները կը շեշտէ ու կը պարզաբանէ իր անապահովութիւնը իբրեւ առաջնորդող խորհրդատու եւ հոգեւոր հայր:

Հեղինակը տարբեր վերնագիրներով լոյս ընծայած է այս շարքէն վեց հատոր: Ան այս աշխատանքին սկսած է 2000 թուականին, ու ցարկ լոյս տեսած են հետեւեալ գիրքերը. «Եկեղեցին, բարոյականը եւ 21րդ դարը» (2001): Այս գիրքը լոյս տեսած է նաեւ անգլերէնով: «Բարոյական տագնապներու դարձանք» (2001), «Մարդը բարոյական արժեքներու դիմաց» (2001), «Մարդը որպէս բարոյական իրականութիւն» (2002): Լոյս տեսած է նաեւ «Գործնական ծիսակրթութիւն» գիրքը (2001):

Արդարեւ, ինքնուրու մտայնացում մը, որուն իրականացումով օգտակար ներդրում մը կը բերէ հեղինակը մեր ընկերութեան: Իր այս աշխատանքներով ան կը յիշեցնէ, թէ մեր ընկերութիւնը պարտաւոր է պահպանելու մեր արժեքները, ընտանեկան թէ ընկերային մեր ուրոյն դիմագիծը, հայ մարդուն ու մանկան կը յիշեցնէ ճշմարտութեան անհրաժեշտութիւնը, կեղծին ու կեղծիքին դաւադրութիւնը: Վերջապէս, համաշխարհայնացումի վտանգին դիմաց երեքստոյ աշխարհը պետք է արթնանայ, որպէսզի մարդը ապրի, շարունակէ իր կեանքը մարդկային, որպէսզի ընկերութիւնը բարձր պահէ իր արժեքներն ու արժանապատուութիւնը:

Պարզ լեզուով, ըմբռնելի բացատրութիւններով գրուած գիրքեր են, որոնց տարածումը հայ կեանքին մէջ, անկասկած բարոյական գիտակցութեան անգրադարձ մը կ'ունենայ: Որպէսզի առաւել արժեքներուն մասին նման այլ գիրքեր, հարկ է ընթերցողը այս տեսակ գիրքին յօգուտ իր հոգեւոր ու մտաւոր վերելքին:

Ս. Պ.

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ**

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԺԱՄՆԸ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացատրութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշերը, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

# ԱՍ ԻՆՉ ՕՐԻ ՀԱՍԱՆՔ

Հայ ծնողներ հրաւեր ստացած էին «ծնողական» ժողովի: Պաշտօնական թուղթի վրայ գեղեցիկ կերպով բանաձեւում հրաւեր մըն էր: Բոլորն ալ չափազանց գոհ եւ պատշաճ գրգռած էին: Այսպէս կ'ըլլար տնօրէնութիւնը ըստածը:

Կիները, բնականաբար, դիմած էին իրենց վարսադարներուն: Անշուշտ կարելի չէր «տերվիշի» երեւոյթով ժողովի երթալ: Ի՞նչ պիտի ըսէին մարդիկ: Սա մենիւրքեր է, նա ուսժ է, փոսր է, փետիւրքեր է, նոյնիսկ այս յատուկ առիթին համար նոյն հագուստներ պիտի գնուէին: Թող տեսնէին օտարները, թէ հայ ծնողները որքա՞ն «բլաս» էին...

Ժողովին օրը բոլոր ծնողները, նոյնիսկ որոշեալ ժամէն առաջ, փութացած էին ժողովարան: Հիմա կարելի չէր արդարեան ըսելով՝ «հայկական ժամադրութիւն»...

Մեծ եղած էր ժողովականներուն գարմաքը, երբ նկատած էին, որ միմիայն հայ աշակերտներուն ծնողները հրաւիրուած էին: Սա ի՞նչ պատիւ էր դպրոցի տնօրէնութեան կողմէ, որ արդէն բացի՝ բացի առիթներով ապացուցած էր իր անահման ազնուութիւնն ու «ծնողամեծարութիւնը»... Հայ ա մե՞ր տնօրէններուն պէս, որոնք կոշտ ու կոպիտ վերաբերման ցուցադրելէ գատ, ուրիշ «հիւնար» չունին: Բայց ինչո՞ւ միայն հայ ծնողները հրաւիրուած էին: Սա ի՞նչ պատիւ էր հայուրեան համար...

Որոշեալ պահուն ներս մտաւ ուսւթագ - տնօրէնը, որուն կը հետեւէր բարտուղարուհիներն ու օգնականներն շքախումբ մը... Իչտէ, մարդիկը վայելցնել գիտեմ, ոչ թէ մեր «աղա»ներուն պէս... Հայ ծնողները ոտքի ելլելով պատուեցին փրօֆեսօրը - ուսւթագ:

Ի՞նչ մարդ էր սա տնօրէնը... Տնօրէնը բեմ բարձրացաւ բոլորին հիացմունքին տակ: Բացաւ թղթաձրար եւ գեղեցիկ յառաջաբանով մը սկսաւ իր պատգամը փոխանցել, որ խորքին մէջ առաջադրանք մըն էր... Տնօրէնութիւնը մեծապէս գոհ էր վարժարանի հայ աշակերտներէն, որոնք միշտ ալ պատուաբեր արդիւնքներ ձեռք կը բերէին, ինչ որ բնաւ զարմանալի չէր: Ուսւթագ - տնօրէնը շատոց կը ճանչցար հայ ազգի գաւակները... Անոնց վստահելիութիւնը, ջանասիրութիւնը, պատուախոնքութիւնը շատոց առածի կարգ անցած էին...

Եկուր հայ ծնող եղիր եւ մի փրօքի, հասպա, «նահուէ կրման»... Տակաւիճ, տնօրէնութիւնը չափազանց գոհ էր հայ ծնողներէն, որոնք ամենայն պարտաճանաչութեամբ իրենց նիւթական պարտաւորութիւնները կը կատարէին լի ու լի եւ ժամանակէն առաջ: Քանի՞ներ, նոյնիսկ արձանագրութեան օրը, միակ չէ՞ք մը կը փակէին ամբողջ տարուան բոչակը: Չէ՛քեր, որոնք բնաւ պարապ չէին դառնար:

Մէկ խօսքով, տնօրէն - ուսւթագը լիովին գոհ էր իր հայ աշակերտներէն եւ անոնց ծնողներէն... Եկուր հայ ծնող եղիր եւ գլուխդ ոչ թէ սրահին ձեղունիին, այլ՝ երկինքին չզարնուէր...

Իսկ տնօրէնութիւնը, այս բոլորին դիմաց, կ'ուզէր պատիւ մը ընել հայ աշակերտութեան եւ հայութեան...

## «Հէթ թանչուֆ»...

- Նկատելով, որ մեր հաստատութեան աշակերտութեան թիւին մէկ երրորդէն իսկ աւելին հայ աշակերտներ կը բաղկանայ, տնօրէնութիւնն որոշեց յատուկ ուշադրութեան առարկայ դարձնել այս աշակերտները: Հակառակ անոր որ այդ բայը յաւելեալ ծախսերու դուռ պիտի բանար հաստատութեան համար, բայց եւ այնպէս այդ բայը պիտի առնուէր...

Իսկ ի՞նչ էր այդ բայը... Անհամբերութիւնը անսանձելի կը դառնար...

- Հայ աշակերտներուն համար պիտի հաստատուէին հայերէնի եւ վերի կարգերուն համար, նոյնիսկ հայ գրականութեան պահեր... Բնականաբար անշուշտ հայ ծնողներուն գնահատանքին եւ յօժարութեան արժանանալիք այս բայը, վստահաբար, դրական երեւոյթ մը պիտի համարուէր...

Ի՞նչ քար լուսութիւն մը իջաւ հայորդիներով լեցուած սրահին վրայ... Ո՞ր էր բուն ծափահարութիւնը... շփոթիլը քիչ էր ուսւթագ -

տնօրէնին համար... Ի՞նչ սխալ բան պատահած էր...

Հայ ծնողները խօսք չէին կրնար գտնել... սա ի՞նչ անհամ բան էր: Որո՞ւն պէտք էր հայերէնը... Մեղք չէի՞ն իրենց չորհուրեան: Հայերէնը ո՞չ պիզնոսին համար կարեւոր էր, ոչ երեսփոխանութեան, ոչ ալ նախարարութեան... Չէ՛, սա փրօֆ. - ուսւթագը խելքը բոցուցած ըլլալու էր...

Տնօրէնը տակաւին կը շարունակէր: Ինք լաւ կը ճանչցար «մթրան» Միսրոպ Մաշտոցին, որ սքանչելի գիտնով մեծ ծառայութիւն մատուցած էր հայութեանը...

- Քա, սա Մեսրոպ «մթրան»ը ո՞վ էր... Անթիլիափ՞, թէ Էջմիածինի «մթրան» է: Ի՞նչ գիտի մասին էր խօսքը...

Մնողներէն միւս, չկարենալով համբերել, խօսք առաւ ըսելով.

- Ուսւթագ - տնօրէն, մենք մեզ շատ պատուելու զգացիք իբրեւ հայ ծնողներ՝ ձեր առաջարկին եւ այս հաւաքին համար: Սակայն, կը ներքեւ ուսւթագ, մենք բնաւ պիտի չուզէինք, որ մեր աշակերտները, մեր նիկերի պատուները, ծանրաբեռնուէին հայերէն - մայրենի նիւթերով: Թող առոյթ լաւ սորվէին անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն եւ գիտական նիւթեր, եթէ հայերէն սորվեցնել ուզէինք, իրենք շատ լաւ գիտէին հայկական դպրոցներուն տեղերը... Նոյնիսկ հող, իրենց մէջ, կային հայկական դպրոցներու մէկ երկու հոգաբարձուներ...

Ներկաները, անմամն միակամութեամբ մը, իրաւունք տուած էին այս ելույթին:

Կին մը քովիցին կը գանգատէր. «Քա, մեր դրամով «աբիլ» պիտի ընեն մեզ: Ի՞նչ, մենք դրամ վճարենք հայերէն սորվեցնելու համար իրենց ձագերուն»: «Լա ես հայ պիպի»...

Սա մարդը «ամմա» «պիզնոսմէն» է եղեր...

- Մենք ալ կը կարծէինք խելացի մարդու ձեռքերուն յանձնած ենք մեր գաւակները...

- Իչտէ, մարդը «ասլի ֆինիքսի» է եղեր... խալիս, խուլիս վաճառական...

Ներկայ հայութեան միահամուռ բողոքի ձայնը կը բարձրանար. ի՞նչ ըսել էր հայերէն սորվեցնել իրենց գաւակներուն: Պարսկի՞ դրամ վաստկած մարդիկ էին իրենք. բոշակները լիովին կը վճարէին, նոյնիսկ կանխիկ, արձանագրութեան աւան: Այդ բոլոր պզուտական կեցածքները այսպէ՛ս պիտի վարձատրուին... փո՛ւհ:

Եթէ իրենք անպայմանօրէն ուզէին հայերէն սորվեցնել, ակունք կը դրկէին իրենց ձագուկները: Նոյնիսկ հող չէին դրկեր շատեր՝ ստունցանգլերէնը կամ ֆրանսերէնը չպիտի տեսնուէր...

Տնօրէնը շքանք մըն ալ մթնոլորտէն՝ գիտեմ հիշող ժամանակին ետդարձ ընել... Ինք իր պիզնոսը ինչո՞ւ աւրէր, երբ սա հայ ծնողները իրենք հայերէն չէին ուզեր... Մէկ երկու բաներ ըսելէ ետք, կարելի կայեր էր մարդը... Հրաւիրէր էր ներկաները հիւրասիրութեան մը...

Ճուտեր, ջրուստաններ, փրթի-Ֆուրներ, եւ այլն... Հայ ծնողները, մեծ եռանդով թեքուցուցած էին սեղանները... Է՛հ, իբրեւ հայեր, հայու հաստատակամութեամբ, կրցած էին ծախողեցնել տնօրէնութեան դաւադրութիւնը... Հայերէն պահեր եղեր, ո՞ր դարուն մէջ կ'ապրէր սա ուսւթագ - տնօրէնը...

Մէկը ափսոսանքով դիտել տուած էր, որ երանի անկ հայկական աղուոր լէ՛հմէ՛հիւն էր եւս դրուած ըլլար սա նոյն սեղանին վրայ... Կծծու շաթթայով համով հոտով հայկական լէ՛հմէ՛հիւն մը... Հետեւ մ'էկ երկու բաժակ «այրան»...

- Հոգե՞ս 2, ինչու իրենք հոգե՞ս 2՞ հրաւիրուած էին: Լէ՛հմէ՛հիւնը հայկական հոգե՞ս 2 խորհրդակիշն էր...

Իսկ տնօրէնը, քաղաքավար ժպիտներով, քաշուած էր, հայկական սա անախընթաց միակամութեան ու վճռակամութեան դիմացէն...

«Դեհ, եկ վարդապետ (ոչ Կոմիտաս, այլ Մաշտոց) ու մի ցնորիք»: Ցնորիլ ոչ թէ բուրբի եթաթաղանէն, այլ հայուն նուաճած սա նոր ցնորամոլութեանէն...

# ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՆԱԽԱԳԻԾԻ ԲՆՆԱՐԿՈՒՄ

14 Մայիսին տեղի ունեցած է փոստնութեան դէմ պայքարի ծրագրերնուն հետ կապուած աշխատանքները համակարգող յանձնախումբին նիստը, որուն ընթացքին քննարկուած է փոստնութեան դէմ պայքարի ռազմավարութեան մշակման ծրագրի նախագիծը, որ միջազգային եւ հայ մասնագէտներու խումբի մը շուրջ երեք ամսուան աշխատանքին արդիւնքն է:

Աշխատանքային խումբին անդամները յանձնախումբին ներկայացուցած են իրաւական, տնտեսական, քաղաքական համակարգի, պետական կառավարման, օրէնսդրական, քաղաքացիական ծառայութեան, տեղեկատուական եւ այլ մարզերու մէջ նախատեսուող բարեփոխումներուն վերաբերեալ իրենց տեսակէտներն ու առաջարկները:

Քննարկման ընթացքին, իբրեւ փոստնութեան դէմ պայքարի կարեւոր ուղղութիւններ, նշուած են աղ-բատնութեան կրճատման, գործարար միջավայրի ստեղծման, հարկային եւ մաքսային քաղաքականութեան բարելւում, օրէնսդրական նպատակաւոր դաշտի ապահովման, պետական համակարգի բարեփոխումներու, քաղաքականութեան մշակման մէջ հանրութեան եւ հասարակական կազմակերպութիւններու լայն մասնակցութեան եւ այլ միջոցառումներ:

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան մինչեւ 1 Յունիս պայմանագրով տուած է ծրագրի նախագիծին եւ նիստին ընթացքին արտաստուած տեսակէտներուն վերաբերեալ բոլոր շահագրգիռ նախարարութիւններուն կարծիքներն ու առաջարկները ստանալու համար, այս բոլորը հաշուի առնելէ ետք յանձնախումբը գնահատական պիտի տայ ներկայացուած աշխատանքին:

Փոստնութեան դէմ պայքարի յանձնախումբին հաւանութիւնը ստանալէ ետք, բարեփոխուած ծրագրերին նախագիծը պիտի դրուի նաեւ հանրութեան լայն շրջանակներու քննարկման:

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵ ՀԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ՊԵՏՔ Է ԸՆԴԼԱՅՆԵԼ Կ'ԸՍԵ ԿԻՄ ԲԱՆԱՅԵԱՆ

14 Մայիսին Հայաստանի Ազգային Ժողովի Զ. Յ. Դ. խմբակցութեան անդամ Կիմ Բալայեան յայտարարեց, որ եթէ Հայաստանի պատուիրակութիւնը շարունակէ Եւրոպական խորհուրդին ներկայանալ այս նուազագոյն միջոցներով, ապա չի բացառուիր, որ կորուստներ արձանագրուին թէ՛ Լեռնային Ղարաբաղի եւ թէ՛ Հայկական Յեղասպանութեան հարցերով:

Կ. Բալայեանի համաձայն, չորս հոգիէ կազմուած Եւրոպական խորհուրդի խորհրդարանին վեհաժողովի Հայաստանի պատուիրակութիւնը կարելիութիւնը չունի լիարժեքօրէն մասնակցելու անոր աշխատանքներուն:

«Անհրաժեշտ է, որ Հայաստան այս կազմակերպութեան աշխատանքներուն մասնակցի ամբողջական պատուիրակութեամբ՝ ներառելով ոչ միայն օրէնսդրի մարմինի, այլեւ գործադիր եւ լրատուական միջոցներու ներկայացուցիչները», նշեց պատգամաւորը:

Կ. Բալայեան աւելցուց. «Ազգայնականի եւ Թուրքիոյ պատուիրակութիւնները կը ներկայանան բազմանդամ կազմով եւ Լեռնային Ղարաբաղի հարցի ու Հայկական Յեղասպանութեան վերաբերելու կը տարածեն իրենց ապատեղեկատուութիւնը, իսկ մենք չունինք քաղաքական մեր միջոցները, որպէսզի Եւրոպային ներկայացնենք իրական փաստերը»:

# ԿԸ ՆՈՒՒՐԴ

Ա. Նշան Մայր եկեղեցույ եղած են հետեւեալ Գուրաւորութիւնները.

- ՕԳՏԻԿ Խուպէւերեանի մահուան առիթով, Էլիաս Նաւեր 20,000 լ.ո., Ֆուսա Սուբարզէ 20,000 լ.ո., Պետար Ամուրի 20,000 լ.ո., Սոսիթթէ Աստուրջ 50,000 լ.ո., Ֆուսա Ծահին 10,000 լ.ո., տէր եւ տիկին Յակոբ Հոգատեան 50,000 լ.ո., Ժողով Էքզուա 20,000 լ.ո., տէր եւ տիկին Վիգէն եւ Վերա Թագաճեան 10,000 լ.ո., շէքի դրացիներ 50,000 լ.ո., Յովհաննէս Էքզուպէտեան 50,000 լ.ո.:
- Շահէ - Ծարպէ Ծամլեանի մահուան յիշատակին, տիկին Ծամլեան 15,000 լ.ո.:
- Նիշատակ իր ծնողաց, օրդ. Ծուշան Մահուրէճեան 10,000 լ.ո.:
- Շաղկապարի Դուրբաքէի առիթով, ազգային մը 100 \$, տիկին Պերնուհի Պուստեան 60,000 լ.ո.:
- Գարամագիցներու հին եւ նոր ԳՆԶԵՏԵԱԿԵՐՈՒ Կորուսուած յիշատակին, տիկին Թագուհի Մերտիճեան 20,000 լ.ո.:
- Տոնք. Վարդան Աժֆերեանի մահուան Ա. տարելիցին առիթով, տէր եւ տիկին Աւագ Պահատեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Խաչիկ եւ Աճի Նահապետեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Հրայր Աժքայեան 50,000 լ.ո.:
- Տէր եւ տիկին Վահէ Օհանեան 100,000 լ.ո., փոքրիկ Լիւիս Փանդեան 5,000 լ.ո., ազգային մը 5 \$, տիկին Գագանեան 10,000 լ.ո., օրդ. Ծուշան Մահուրէճեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Պարսուեան 10,000 լ.ո.:
- Թագուհի Դաւիթեանի մահուան քառասունցին եւ Վարդուհի Դաւիթեանի 10րդ տարելիցին առիթով, օրդ. Հուրի Դաւիթեան 75,000 լ.ո., խումբ մը ընկերուհիներ 30,000 լ.ո.:
- Այստա Զիլեճեանի մահուան Ա. տարելիցին եւ Արամ Զիլեճեանի Գ. տարելիցին առիթով, տէր եւ տիկին Ծահէ Զալեան 20 \$:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՆՇՈՒՄՆԵՐԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Հայաստանի դէմ քաղաքական ճնշումներն ամերիկեան վարքագծի վերջին օրինակը հանդիսացաւ. «Հայաստանի որոշ ընկերութիւններն իրենց փոստնութեան միջոցներ կիրառելու որոշումը, որոնք իրանին արգելուած արհեստագիտութիւններ են տրամադրել»: Ըստ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարի՝ Հայաստանի հետ «սեւ ցուցակի» մէջ են Ձի-նաստանն ու Սուրաւիան:

Հայաստանի դէմ քաղաքական այս ճնշումիցը յաջորդում է արանից ճիշդ մէկ շաբաթ առաջ կատարուած Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանի կիսասպառնական այն յայտարարութեան, ըստ որի՝ «Հայաստանը իրանի հետ իր յարաբերութիւններում պէտք է խիստ զգուշաւոր լինի», քանզի «Ամերիկեան խիստ մտահոգուած է, որ իրանն աշակցում է ահաբեկչութեանը, ձեռք բերում զանգուածային բնաջնջման գէշերը...»: Դեսպանը շարունակում է. «...Եւ քանի որ Հայաստանը իրանի անմիջական հարեաններին է, ուստի դրանք եւս պէտք է մտահոգիչ հարցեր լինեն Հայաստանի համար»:

Ուրեմն՝ թանկագին ընթերցող, ի՞նչ է ստացում: Ստացում է, որ Հայաստանն ու հայութիւնը այլեւս ոչ թէ իրենց շրջափակող Թուրքիայից եւ ամէնօրեայ պատերազմի սպառնալիքներով կոչեր արձակող Ազգրպէճանից, այլ Հայաստանի միակ յուսալի հարեան իրանից պէտք է զգուշանան ու մտահոգ լինեն:

Այս է, ցաւօք, Միացեալ Նահանգների այսօրեայ շրջանային շահի թելադրանքը: Իսկ ո՞վ սասց, որ այդ շահը պէտք է անպայման համընկնի Հայաստանի ազգային - պետական շահերին:

Չէ՞ որ միեւնոյն՝ սեփական շրջանային շահերից էին խօսում Միացեալ Նահանգները, երբ իրենց իսկ փոնկը՛սի հաստատած հայաստաստ 907րդ բանաձեւը բեկանել էր տալիս նոյնինքն կրտսեր Պուշը: Եւ միթէ՛ դրան չհետեւեց՝ Հայաստանի տրուելիք տարեկան պիւտճէի կրճատման որոշումը:

Այդ կրճատումը պիւտճէի անուղղակիօրէն չյատկացուեց «Հայ - Թուրքական Հաշտութեան Յանձնաժողով» ստեղծուելու դասադիր գործընթացին, ինչպէս հետագայում իրատուական նոյնինքն Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարը:

Ամերիկայի շրջանային շահերը, ինչ խօսք, առաջնահարթաբար համապատասխանում են նոյն շրջանի իր գաղափարի Թուրքիայի շահերին, որոնք, մեղմ ասած, չեն կարող հաշտ լինել Հայաստանի դիրքորոշմանը թէ՛ Հայ Դատի գծով, թէ՛ այս կամ այն հարեանի հետ յարաբերութեան եւ թէ՛ առաւել եւս՝ դարբաղեան հարցի կարգաւորման անհնուութեամբ:

Վերջին պարագային խնդրում յատկանշական է Ղարաբաղի հարցի կարգաւորման գործընթացում դերակատար Միսրոպի խմբի Ամերիկայի ներկայացուցիչ Փերինայի օրերս կատարած այն արտասպառնութիւնը, որի համաձայն՝ «Ղարաբաղի կարգաւորմանը դիտուում է Ազգայնականի կազմի մէջ...», չեղտելով Ազգայնականի «հողային ամբողջականութեան» ձախողումը տարբերակի կիրառելիութիւնը:

Սա եւս քաղաքական նոյն կարգի ճնշումից է Հայաստանի դէմ, վերջինս նահանգի մատնելու նպատակադրումով: Բայց փաստ է արդէն, որ Ցամեայ հրադադարի ընթացքում ԵԱՀԿի խմբի ոչ բոլոր առաջարկներն են իրագործուել, առաւել եւս, եթէ շրջանք սպառնական-վերջնաբաղային տեսք են ընդունել՝ այս կամ այն ուժի հրահրումով:

Եթէ Միացեալ Նահանգների վարչակազմում փոխախազաճ Տիք Չէյնիների եւ պաշտպանութեան ու փնէթակոնեան գերատեսչական ղեկավար Ռամսֆելտների քարկոչի արգիւնաբերական գործարքները պայմանաւորուած են դարբաղեան հակամարտութեան շուտափոյթ կարգաւորմամբ, դա ամենեւին էլ չի նշանակում, որ վերջնագրային եւ ճնշմամբ շրջանային եղանակներն են լինելու որոշիչ գործօններ: Վկայ՝ Իրաքը, Գուալայի, Վենեսուէլայի եւ նոյնինքն իրանի օրինակները, որոնք թէ՛ եւ աշխարհագրաքաղաքական միմեանցից տարբեր պայմաններուն են, բայց եւ այնպէս՝ գանազան ճնշումների դէմ անճարակ կացութեան մատնուելու թուլութիւն չեն ցուցաբերում:


Միացեալ Նահանգների քաղաքական ճնշումներն իրաքագիծը Հայաստանի դէմ միտում է ի վերջոյ վերջինս ստիպել անընդունելի գիւղամերի գնալ դարբաղեան հարցի գծով: Եթէ՛ դա Միացեալ Նահանգների շահերից է բխում, ամենեւին չի համապատասխանում Հայաստանի եւ հայութեան շահերին:

Դա են վերջապէս ապացուցում նոյնինքն Հայաստանի նախագահի արտասպառնութիւնները թէ՛ Արժանիքի եղած ժամանակ, եւ թէ՛ լատինամ

# ԱՉԳԱԿ

## ՍԵՒ ԵՒ ԼՈՅՍ

Ոչ թէ խաւար եւ լոյս եւ կամ սեւ եւ սպիտակ, այլ՝ պարզապէս «Սեւ եւ լոյս» խորագրած է Ալէն Թասսո իր վերջին ցուցահանդէսը, որուն բացումը տեղի ունեցաւ Ապրիլ 18ին: Յուշահանդէսը պիտի երկարի մինչեւ Մայիս 18ը: «Ամիալ» ցուցասրահին մէջ (Համրա) ցուցադրուած անոր 37 ստեղծագործութիւններէն 30ը իրագործուած են չինական մելանով, իսկ 7ը իւզանկարներ են: Իրենց բնոյթով ու արտայայտամիջոցներով բոլորն ալ կ'արդարացնեն անոնց տրուած «Սեւ եւ լոյս» ընդհանուր խորագիրը: Այս երկու բառերուն մէջ խառնուած է Ալէն Թասսոյի աշխարհաբնակալուծը, որ արեւստարան ու փիլիսոփայ է՝ գեղանկարիչ ըլլալով:




**«Յափշտակութիւն».** գործ՝ Ալէն Թասսոյի: Լալէ առաջ եւ գորդ ու բանաստեղծ է՝ արուեստարան ու փիլիսոփայ ըլլալէ առաջ: Ան ծնած է Պէյրութ 1962ին: Յարգահեղինակ է տասնեակէ մը աւելի գիրքերու, որոնք արժանացած են շարք մը մրցանակներու: Տրուած ըլլալով որ ան Ֆրանսերէնով կ'արտայայտուի, եւ անոր գործերը բազմիցս ցուցադրուած են Փարիզի մէջ, անոր ստեղծագործութիւնները առաւելարար արժեւորուած ու գնահատուած են:

Յրահանգի մէջ: Ալէն Թասսո Հանրաժանութիւնը անոր մըն է նաեւ Լիբանանի մէջ թէ՛ իրեն գորդ, թէ՛ իրեն արեւստարան եւ թէ՛ իրեն գեղանկարիչ: Անոր գործերը վերջին տարիներուն պարբերաբար ցուցադրուած են Լիբանանի տարբեր ցուցասրահներուն մէջ եւ արժանացած են յատուկ ուշադրութեան եւ բարձր գնահատանքներու:

Իրեն արտայայտչամիջոցը՝ թասսոյի օգտագործած հիմնական գոյներն են: Անցեալին անոր ստեղծագործութիւններուն մէջ սեւին երբեմն կ'ընկերակցէր ոսկեգոյնը, իսկ այսօր իրեն լոյսի տարբեր զրահներով, անոր ստեղծագործութիւններէն ումանք սեւին «խաղաղութիւնը» կը խախտեն կապոյտով եւ կամ կարմիրով:

Անցեալին անոր վրձնահարուածները կեդրոնախոյս էին: Ուժեղ անոր կեդրոնէրէն դէպի դուրս կը տարածուէին լիցքաթափուած ուռմբի նման: Այսօր անոր ստեղծագործութիւններէն քիչեր միայն իրագործուած են կեդրոնախոյս «Հարուածներով»: Այսօր չինական մելանով իրագործուած անոր գործերն աւելի ուշադրաւ ու հետաքրքրական են անոր ինքնակարները, որոնք իրարմէ տարբեր ըլլալով հանդերձ, կը ներկայանան իրեն նոյն գիրքի տարբեր գլուխները ու «կ'ընթերցուին» միասնաբար...:

Սեւը խաւարը չի ներկայացնիր Ալէն Թասսոյի համար: Եւ ոչ ալ կը ներկայացնէ տիեզերական այն սեւ ծակը, որ դատարկ է, անհուն ու անյատակ է: Այն թեթեւ լուսաւորումներով ու երանգաւորումներով սեւը մարմին կ'առնէ, կը շնչաւորուի ու կ'իմաստաւորուի թասսոյական:



«Ոսկեղէն ցորեն».

Իւրայատուկ վրձնահարուածի մը տակ՝ իրեն կեանքի դաժան երգ եւ կամ վերացարկուած ու «ճզմուած» փիլիսոփայութիւն:

Բազմակողմանակիօրէն օժտուած ու խորապէս զարգացած այս երիտասարդ արուեստագէտին փիլիսոփայական ըմբռնումները կու գան Մայրագոյն Արեւելի հին մշակոյթներէն, կը բեկուտին սուֆիզմի միսթիք պրիսմակին մէջ ու կը բացուին ժամանակակից կեանքի եռեւեթուստի վրայ:

Փիտուլեան կողմէ ընդունուած է, որ սեւը լոյսի ճառագայթները կը կլանէ, հետեւաբար, իրեն աղբիւրին, ան լոյսի բացակայութիւնն է: Այս պատճառով տպաւորապատները մերժեցին սեւը գործածել իրեն գոյն: Իսկ Ալէն Թասսոյի օգտագործած գոյնը սեւն է: Այն սեւը, որուն վրայ լոյսի շիթեր կը բեկուտին իրեն տապալահար ու հոգեմտաւոր մասունքները բանական գլխադիր մարդու:

ԳՌԿՏ. ՄՈՎՍԵՍ ՆԵՐՍԷՍԻԱՆ

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻՆ

Արտասահմանեան միամտագրում, այսպէս կոչուած, հրահանգներ կարողացի այն մասին, թէ տանն ինչպէս պիտի վարուի կինը, որպէսզի ամուսնուն մինչեւ դազողի կափարիչը դնելը, պահի իր հմայքի ներքոյ: Հրահանգներին առաջին իսկ կէտը հետեւեալ խորհուրդն էր տալիս կանանց. «Աչխտանքից տուն դարձող ամուսնուն դիմաւորէք մաքուր, կոկիկ հագնուած, ուրախ ու անկաշկանդ: Հարցեր մի տուէք, քանի դեռ չի ճաշել, թերթերը չի կարդացել, չի սպիրուէլ եւ մեռեալ ժամը չի անցկացրել, մի՛ փնտվէք այն նուէրը, որ ան գնել է ձեզ համար: Լուսացք ու արդուկն արէք ժամանակին: Երբ նա աշխատում է, երեխաներին տարէք մի ուրիշ սենեակ եւ այսպէս շարունակ:

Մտայ խանութ, գնեցի մի տուփ պահածոյ, մի սրուակ անուշահոտ, եւ, մինչեւ ականջատակերս սպասուով, բացեցի մեր տան դուռը:

- Ի՛նչ ես լոքոյի պէս բերանդ բացել, քսանինն ատամնե՛րդ ես ցոյց տալիս (առջեւի երեք ատամներէն) անցեալ տարի գրկուեցի. կնոջս ձեռքից կօշիկը պատահաբար ընկաւ, եւ կրունկը պատահաբար դիմաւ ատամներինս:

- Քեզ համար հրահանգներ եմ բերել, կնի՛կ, առկարդա՛:

Իմ սիրասուն տիկինը ուշադիր կարդաց, նայե՛ց, նայե՛ց, հրահանգները ծուէն-ծուէն արեց գլխիս ու, սուրբ խոհանոց: Քիչ անց եկաւ. կրունկը պոկուած կօշիկը, հատը զնացած գուլպան, երեք ատամ չլճարած բնակավարձի անդորրագիրը թափեց առաջ եւ քամահանքով հարցրեց.

- Ամիսը քանի՞ օր ունի, եթէ գիտես:  
- Կամ 28, կամ 29, կամ 30, կամ էլ՝ 31, - կակազելով պատասխանեցի ես:  
- Եթէ երեսունը բաժանենք երկուսի, ի՞նչ կ'անի: Յիշեցի երեխայ ժամանակս, երկրորդ դասարանում, երբ դասատունն ինձ հարցրեց էր տալս, բերանիցս փալիք էր թափուում:

- Տասնհինգ, հայրիկ, - սենեկով՝ պապանձուել եմ, յուշեց որդիս:  
- Տասնհինգ, - ասացի:  
- Էսօր ամսի քանի՞նն է:  
- Տասնհինգը, - կրկնեցի:  
- Տասնհինգը ցաւ մտնի ջանդ, ոռճիկդ բերել ես: Ձեռք տարայ գրպանս, սառը ձեռքս մերկ ազգրիս կպչելուն պէս մարմնով սարսուռ անցաւ: Յետոյ ձեռքս ծոցագրպանս խոթեցի, յետոյ՝ վերարկուիս, յետոյ՝ կոստիւմիս եւ...:

- Հրահանգները հօ բերել ես:  
- Բերել եմ, կնիկ ջան:  
- Յետոյ, ի՛նչ, իմ հրահանգի՛նն ես, այ՛ սրտամեծ:  
- Չէ՛, բայց, դէ՛, եթէ քեզ դուր չի գալիս, այ՛ կնիկ, կռիւ սարքելու ի՛նչ կայ էստեղ: Պատուեցի՞ր պրծաւգնաց, էլ ի՛նչ ես ուզում: Հէնց էնպէս, հանաք անելու համար բերեցի, թէ չէ ես չգիտեմ, որ դրա մէջ զբառը պակուելութիւն է, հօ ինչքա չեմ թոքրել: Բա դու զբառն ես արժանի...:

- Մարդու ես, հա՛:  
- Ի՛նչ ես կպել ինձ, այ՛ կնիկ, ես էլ մարդ եմ, չէ՞: Ինչ ուզում, էն էլ անում ես. ես չեմ երեխանն եմ: Ո՞վ եմ էս տանը, ես էստեղ ի՛նչ եմ անում, քո ահից սիրտս պիտի պայթի՞, տուն դարձե՛ց էլ պիտի փայտանամ: Վա՛, հօ չե՞ս կարծում, թէ աշխարհի տէրն ես: Ի վերջոյ՝ սահմանադրութեամբ ես էլ քեզ հաւասար եմ, չէ՞, - ներդաշնացած բացազանչեցի ես:

- Տօ՛, դու՛, ո՛ւմ վրայ ես գոռում եւ ո՛ւմ տանը, - ասաց կինս, սենեակն աչքի անցկացրեց, եւ հայեացքը կանգ առաւ դաշնամուրի վրայ շարուած փղերի քարաւանի առաջնորդ մեծ փղի վրայ: Փիղն ափսոսալով՝ փոքր-ինչ մեղմացաւ:

- Ի՛նչ է պատահել, այ՛ կնիկ, ով է տեսել՝ չնչին բանից կռիւ սարքեն: Նստենք ու իրար հասկանանք: Հանաքից ե՛տ ես վարժուել:  
- Իսկ դու ո՞նց ես համարձակուել, ի՛նչ երեսով ես ինձ բերել էր հրահանգները:  
- Բայց ի՛նչ է գրուած դրա մէջ, որ կատարել ես:  
- Էդ որ գրուած է, թէ աշխատանքից տուն դարձող ամուսնուն հարցեր մի՛ տուէք, դու գոնէ մի անգամ տեսել ես՝ տուն գաս էնպէս, որ լեզուդ պտտուի բերանումդ: Ես էլ ոչինչ չհարցնեմ քեզ:  
- Մի՛ սպանիր եւ հարցրու ինչ ուզում ես:  
- «Մի փնտվէք էն նուէրը, որ գնել է ձեզ համար» այս յիմար ցուցումի մասին ի՛նչ կ'ասես:  
- Ի՛նչ պիտի ասեմ. օղեկոլոն հօ բերել եմ:  
- Օղեկոլոնը լցրու քո էդ նիկելապատ գլխին, ես վարսաւի՛ր եմ քեզ համար:  
- Բա պահածո՞ն:  
- Հերիք չի՛ արեւնս պղտորում ես, հիմի էլ թունաւորե՛լ ես ուզում: Դէ՛, հէնց հիմի պահածոդ առ ու չքուրիք հատեղից: Եւ, իմացի՛ր, մինչեւ աշխատավարձդ չբերես, ոտքդ էս տան շեմից ներս չդնես:  
- Ա՛յ կնիկ, գոնէ յանուն քաղաքավարութեան, հարցրու՛ գուցէ սոված եմ, գուցէ ուզում եմ մեռեալ ժամ անցկացնել կամ օրուան թերթերն եմ ուզում կարդալ, կամ թէ՛ աշխատել եմ ուզում...:

- Էլի հրահանգներո՞վ խօսեցիր: Սոված ես, կեր քո գարու՛րդ պահածոն, եւ էնպէս անկացրու մեռեալ ժամը, որ այլեւս չարթնես: Յետոյ ո՛չ թերթի կարիք կը զգաս, ո՛չ աշխատանքի: Գուցէ երեխէքն էլ անհասկացանքում են, չե՞ս ուզում միւս սենեակը տանն: Լեզուդ լալկե՛ց, տիպդ կտրուի, հա՛: Հրահանգներով ես ուզում աշխատել:

Գործն այնքան անսպասելի ընթացք ստացաւ, որ

Հակառակ անոր որ վրացիները մեր դարաւոր դրացիներն են, մենք՝ սփիւռքահայերս գրեթէ ամուսնացած ենք անոնց մշակոյթին եւ գրականութեան: Նոտար Տոււպաճեմ անոնց մեծագոյն գորղներն է: Ստորեւ կու տանք փոքր մտուղ մը անոր պատմութեանը:

Հտապ-չտապ հաւաքեցի պահածոն, օղեկոլոնը, գլխարկս եւ դուրս նետուեցի:  
- Հրահանգդ մնաց, - արդէն փողոցում էի, երբ գոչեց կինս եւ ծուէն-ծուէն արուած իմ դժբախտութեան պատճառը թուցեցի կնիքի նման թափեց գլխիս:

Այժմ պատասխարուել եմ ազգականիս տանը եւ օրը երեք անգամ դիւանագիտական ներկայացուցիչներ եմ ուղարկում կնոջս մօտ. հաշտութիւն եմ խնդրում կինս դեռ տատանուում է, բայց ամուսնան վերջն է, աշխատավարձի ժամանակը մօտենում է, ուստի, ամենայն հաւանականութեամբ, կը համաձայնի:

Ճիշդ աշխատավարձ ստանալու օրը կինս բանակցութիւնները վարելու համաձայնութիւն տուեց: Հանդիպման օրը կիրակի էր ընտրել: Բանակցութիւնները պայմաններին ու բանաձեւի նախագծին, կազմուած իմ կնոջ կողմից, նախօրոք ծանօթացրին ինձ: Այն պարունակում է հետեւեալ կէտերը.

1.- Աշխատանքից տուն դարձող ամուսինը ոչ մի դէպքում պիտի չհանձնագտացնի ընտանիքի անդամներին, իրեն այնպէս պիտի պահի, որ իր գոյութիւնը զգալ չտայ:

2.- Եթէ քաղցած է, առանց որեւէ հարց տալու, կարող է քաշուել խոհանոց եւ կերակուրել, եթէ, ի հարկէ, կը գտնի որեւէ բան, հակառակ պարագայում քաշուում է սեղանի, ընկնում քաշտին եւ անցկացնում այսպէս կոչուած մեռեալ ժամը:

3.- Ինչ վերաբերում է թեթ կարդալուն, պապ ամուսինը պարտաւոր է իմանալ, որ տունը ընթերցարան չէ եւ, որ կանայք թեթք առնում են, բայց ոչ կարդալու համար:

4.- Ինքը պետք է լուսնայ, ինքն էլ արդուկի:  
5.- Նուէրները պետք է գնի կնոջ խորհրդով եւ կնոջ յանձնարարութեամբ, հակառակ դէպքում բերուած նուէրները կը խշրուեն իր իսկ գլխին:

6.- Երեխաների խաղ ժամին անյապարջ քաշում է տնից եւ սպասում այնքան, մինչեւ որ ներս կանչեն:

7.- Ժամանակին բերում է աշխատավարձը, կոպէկ-կոպէկ յանձնում կնոջն ու քաշում մի կողմ:

8.- Առաւօտ կանուխ վեր է կենում, կարգի բերում սեղանը, թէյ դնում, աշխատանքի գնալուց առաջ կերցնում երեխաներին, ոտնաթափելի վրայ մօտենում կնոջ մահակալին, համբուրում կնոջ նակար եւ, առանց ձայն-ձայնուի հանելու, քաշում իր անկիւնը: Ակնյայտ է, որ մտան աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

9.- Եթէ վերը բուրակուած պայմանների իրակացումը կը գերազանցի տղամարդու ուժն ու կարողութիւնը, գերադասելի է առհասարակ մոռանալ տուեցարձի նամակը:

Մանրագնին ուսումնասիրեցի բանաձեւի նախագիծը, ծանր ու թեթեւ արեցի, շատ մտածեցի, անիծեցի այն օրն ու ժամը, երբ հրահանգները տարայ ու տուեցի կնոջս եւ... ստորագրեցի յիշեալ պայմանագիրը:

Օրհնէ՛ք իմ ճամբան, բարեկամներ՝. գնում եմ բանակցելու կնոջս հետ: Գնում եմ եւ ձեզ եմ կտակում հետեւեալ պատգամը:

- Տղամարդի՛կ, զգօ՛ն եղէք:

Հտապ-չտապ հաւաքեցի պահածոն, օղեկոլոնը, գլխարկս եւ դուրս նետուեցի:  
- Հրահանգդ մնաց, - արդէն փողոցում էի, երբ գոչեց կինս եւ ծուէն-ծուէն արուած իմ դժբախտութեան պատճառը թուցեցի կնիքի նման թափեց գլխիս:



«Սիրոյ միութիւն».

Քարը տաշելու, յղկելու, մշակելու եւ անոնցմէ յարդարային բնոյթի սիրուն ձեւեր կերտելու ունակութիւնը

## ԳԷՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԿԱԾԱՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

տրուած է առանձնաշընորհեալ անձերու միայն: Իսկ քարեղէն գանգուածները զգացական գոյներու (այս պարագային բանաստեղծութիւններու) վերածելը վերապահուած է ի վերուստ օժտուած տաղանդներու միայն: Այս երկրորդ տեսակի քանդակագործներէն է Մարուն Հաքիմ, որուն անհատական նորագոյն ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ 14 Մայիսի երեկոյեան ժամը 7:00ին, «Էփրեօվ տ'Արթիսը» ցուցասրահին մէջ (էջերթից):

Յուշագրուութեան գրուած են համեմատաբար փոքր չափերով քառասունէ աւելի քարեղէն քանդակներ, որոնք կարելի է բաժնեկերպ խուսափելու քանդակուած կնոջական մարմիններ եւ դիմաքանդակներ:

Գեղանկարչութեան թէ քանդակի պարագային կինը մեծ տեղ գրուած է Մարուն Հաքիմի ստեղծագործական կեանքին մէջ: Ան կնոջ



«Երրորդութիւն».

մարմինն միջոցով կը փորձէ արտայայտել այն ամէնը, ինչ որ կը յուշեն ու «կը թելագրեն» իրեն կնոջ մարմինն ձեւայիններն ու անոր էությունը: ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ Շարժ՝ էջ 8

## ՆՈՏԱՐ ՏՈՒՄՊԱԾԵՆ

Վրացերէնից թարգմանեց՝ ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ

**«ԱՉԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ**  
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:




**ՌԱԺԱ ԱՍՍԻ ՀԱՍՏ**  
Տիմ կրնաս օգտուիլ պատշգամդ առանց օրէնք խախտելու՝ գոց սենեակի ձեւով...  
**Անյապարհ հեռաձայնէ՛**  
- Ներքին եւ արտաքին վարադոյր՝ կարող եւ տեղադրելով:  
- Սուրբ - փարքէ - սթոններ - Ռոյ ափ վարադոյրներ  
Անթիլիաս, Պիքֆայայի մայր ճամբուն սկիզբը:  
Հեռ. 03 / 291281 - 04 / 520748  
Անմոցելի գիներ... Վստահութիւնը մեր Ոչանախան է:





# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՆԵՐՄԷ ՀԱՆԳԻՍԱՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆ

Հիրանանի ֆուտբոլի ասոցիացիան 26րդ եւ վերջին հանգրուանի փակման մրցումին, որ տեղի ունեցաւ երէկ, Մարզական Աւանի դաշտին մէջ, աւելի քան 35 հազար համակիրներու ներկայութեան, նրբմէ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Սաթէսի հետ, հանդիսացաւ 2001-2002 եղանակի փոխան: Տիրողոսին տիրանալու համար նրբմէ հաւասարութեան պէտք ունէր, մինչ Սաթէս յաղթանակէ այլընտրանք չունէր:

Նրբմէի կողմը նշանակեցին իրոյ Մաքքըրլէն (73րդ) եւ Պիլլալ Ֆլէյֆէլ (87րդ), իսկ Սաթէսի կողմը՝ Մոհամէտ Ասաս (41րդ) եւ Ֆուադ Հիթազի (90րդ):

35րդ վայրկեանին Ասասի նշանակած փեմալիքին, օրուան իտալացի իրաւարարին կողմէ չեղեալ համարուեցաւ, որովհետեւ բազմաթիւ մարզիկներ մեծ քառակուսիէն ներս մուտք գործած էին: Վարդան Ղազարեան եղաւ 2րդ անգամ փեմալիքին հարուածողը, որ սակայն զսպուեցաւ Նրբմէի բերդապահ Ապտո Քաֆէհի կողմէ:

Միւս կողմէ, Հ.Մ.Մ. 4-0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Թատամոն Սուրէն, հանդիսացաւ չորրորդ խումբը, որ փոխադրուեցաւ Բ. դասակարգ, Հ.Մ.Ը.Մ.ի, ԱՀԻ Սայտայի եւ Ռասիկի հետ:

Ստորեւ՝ 26րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Շապապ Սահէլ - Հ.Մ.Ը.Մ.	1-0
Սաֆա - ԱճԻ Սայտա	3-1
Ռասիկ - Աճ	1-3
Ախա Ալէյ - Աճսար	1-1
Թատամոն Սուր - Հ.Մ.Մ.	4-0
Սայլամ - Պըրթ	3-2
Սաթէս - Նրբմէ	2-2

ԽՈՒՄ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՄՏ.	ԿԵՏ
1. Նրբմէ	19	6	1	61	24	63
2. Սաթէս	18	5	3	52	30	62
3. Թ. Սուր	17	8	1	59	16	59
4. Սահէլ	15	4	7	43	27	49
5. Սաֆա	14	8	4	49	35	45
6. Սայլամ	12	5	9	40	29	41
7. Պըրթ	10	5	11	42	42	35
8. Աճսար	8	10	8	31	28	34
9. Աճ	8	10	8	36	36	34
10. Ախա	9	6	11	27	33	33
11. Հ.Մ.Մ.	8	5	13	32	45	29
12. Հ.Մ.Ը.Մ.	1	6	19	18	48	9
13. Սայտա	2	3	21	20	64	9
14. Ռասիկ	0	6	20	15	69	6

### ԹԵՆԻՍ

## ՍԵՐԵՆԱ ՈՒԻԼԻՍՍ ԵՒ ՌՈՒԷ ՖԵՏԵՐԵՐ ԶԱՆԵՑԱՆ ՀՈՒՍԻ ԵՒ ՀԱՄՊՈՒՐԿԻ ՐԱԺԱԿՆԵՐԸ



Սերենա Ուիլիզմս

Երէկ, Իտալիոյ եւ Գերմանիոյ մէջ աւարտեցան թենիսի միջազգային մրցաշարքերը, որոնց ընթացքին տիտղոսներուն տիրացան ամերիկացի Սերենա Ուիլիզմս եւ գուիթերիացի Ռոուէ Ֆետերեր:

Հոսմի մէջ աղջկանց աւարտականին, սեւամորթ ամերիկացի Սերենա Ուիլիզմս 7-6 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց պելճիքացի ժուրնիստ Վենէնը (դասուած՝ 5րդ): Ուիլիզմսի համար այս յաղթանակը փոխ վրէժի կարեւոր մրցում մըն էր, նկատի ունենալով, որ ան շաբաթ մը առաջ պարտուած էր նոյնիսքն Վենէնէն՝ Գերմանիոյ մէջ:

20 տարեկան ամերիկացին, այսպիսով իր ասպարէզին ընթացքին շահեցաւ իր 14րդ տիտղոսը (երրորդը՝ այս տարուան ընթացքին):

● ՀԱՄՊՈՒՐԿԻ մէջ տեղի ունեցած թենիսի տղոց Մասթրըպի միջազգային մրցաշարքին աւարտականին, գուիթերիացի Ռոուէ Ֆետերեր 6-1, 6-3 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք 6րդ դասուած ռուս Մարաթ Սաֆիւնը, տիրացաւ տիտղոսին:

Ֆետերեր, որ շահեցաւ 372 հազար տոլարի գումար մը, իր ասպարէզին ընթացքին առաջին անգամ ըլլալով կը շահէր «Մասթրըպի» տիտղոսը:

## ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԱ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՊԵԼՃԻԲԱՅԵՆ՝ 1-2

Պատրաստուելու համար 2002ի Մոնտիալին, որուն բացման մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ, Մալիս 31ին, անցեալ շաբաթավերջին կարգ մը երկիրներու ազգային խումբերը կատարեցին բարեկամական մրցումներ:

Աշխարհի եւ Եւրոպայի ֆուտբոլի ֆեդերացիան, որ ձափոնի մէջ 2002ի Մոնտիալի բացման մրցումը ինք պիտի կատարէ (Սենեկալի դէմ), Փարիզի մէջ կրեց պարտութիւն մը, իր հիւրէն՝ Պելճիբայէն, 2-1 արդիւնքով:

Ֆրանսա վերջին անգամ երեք տարի առաջ իր դաշտին վրայ պարտութիւն մը կրած էր Ռուսիայէն, 3-2 արդիւնքով, Յունիս 1999 (Եւրո - 2000ի գումարի մրցաշարք):

Հակառակ փոխմէջըը շինտտին Չիտանի եւ Ջոնաթան Թիերիի Հանրիի բացակայութեան, Ֆրանսա յաջողեցաւ մրցումին մեծ մասին տիրապետել: Կլէն Տը Պոէք նշանակեց Պելճիբայի եւ մրցումին առաջին կողմը (20րդ), իսկ Թիերի Սայմընս՝ Ֆրանսայի կողմը (40րդ վայրկեանին, սխալմամբ իր բերդէն ներս): Վերջին խօսքը, սակայն, եղաւ Մարք Վիլմոթի, որ մրցումին կորուսած վայրկեաններուն զուրտով նշանակեց Պելճիբայի յաղթանակի կողմը:

Չիտանի պաշտօնը ստանձնած Եուրի Ճորթայէֆ Բ. կիսախաղին փոխարինուեցաւ Եոհան Միքելոյով, իսկ մրցումին վերջին վայրկեանին դաշտ ներկայացաւ Ալէն Պոդոսեան, փոխարինելով Միլվէն Ուիլիզմսը: Նշենք, թէ մրցումին ներկայ էր 78 հազար համակիր:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՆՄԱՆ

## ԷՆ. ՊԻ. ԷՅ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ՝ ԼԷՅՔԸՐԶ - ՔԻՆԿԶ՝ 1-0

Էն. Պի. Էյ.ի փլէյօ-Ֆի Արեւմտեան շրջանի աւարտական առաջին մրցումին, որ տեղի ունեցաւ երէկ Լոս Անճելըս Լէյքըրպի եւ Սաքրամենթո Քիսկի միջեւ, վերջ գտաւ Լէյքըրպի յաղթանակով:


## ՀՐԱԺԵՇՏԻ ՄԵԾ ՄՐՅՈՒՄ

ՇՐՋԱՆԱԿՐՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՄԱՐՄՈՆԱԿՐՈՒԹԵԱՆ ԳՄԻՍԱՐԱՐ  
ՍԵՊՈՒՆՅ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Նուիրուած՝  
ԵՂԲ. ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆԻ  
25ամեայ ֆուտբոլիստի ասպարտգին

Ը.Ս.Ը.Ս. ԸՆԴԴԵՍ ԼԻԲԱՆԱՆԻ  
ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՇԱԽԱՅԱԿԱՆԻ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Մայիս 2002, կէսօրը ետք ժամը 4:00ին, Պուրճ Համուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ: Մրցումին առաջ տեղի պիտի ունենայ Ը.Ս.Ը.Ս.ի կրտսերներուն միջեւ խաղ - մրցում մը: Տոմսերը կարելի է ստանալ՝ «Քարլո Թոյր»-էն (Մարաշ) եւ «Ատիտաս Սփոր»-էն («Մատոնա» քաղ):



Սեպասթիան Տէզլըր

պարտութիւն մը կրեց նաեւ Իտալիա, որ 1-0 արդիւնքով տեղի տուաւ Չեխիոյ մէջ:

Մրցումին միակ կողմը նշանակեց Լիվորֆուլի մարզիկ Վլադիմիր Սմիչէր: Հակառակ անոր որ Իտալիայէն կը բացակայէր փոխմէջըը Ֆրանչեսկո Թոթի, սակայն մարզիչ Ճիովանի Թրափաթի կազմը յաջողեցաւ լաւ մրցում մը կատարել, կազմի մը դէմ, որ չէր կրցաւ 2002ի Մոնտիալի իր տոմար ապահովել:

● ԼԵԻԵՐՔՈՒԶԸՆԻ մէջ Գերմանիա 6-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, պարտութեան մատնելէ ետք իր հիւրը՝ Աւստրիան: 22 տարեկան միջնապահ Սեպասթիան Տէզլըր վիրաւորուեցաւ եւ այժմ անոր մասնակցութիւնը՝ 2002ի Մոնտիալին կը մնայ կասկածելի: Գերմանիոյ մարզիչ Ռուտի Վէօլըր, որ նախապէս կորսնցուցած էր երեք հիմնական մարզիկներ, Ենս Նովոթնին, Քրիսթիան Վէօրնգը եւ Մեհմէթ Շոլը, այժմ իր դիմաց կը գտնէ այլ դժուարութիւններ:

Աւելի քան 21 հազար համակիրներու ներկայութեան, Միրոսլաւ Քլոզ, Դեթրիք մը իրագործեց:

Սեպասթիան Տէզլըր (15րդ, 29րդ եւ 53րդ), մինչ Գերմանիոյ մնացեալ կողմը նշանակեցին Մարքո Պոտը (36րդ եւ 70րդ) եւ Տանիէլ Պիերոֆթա (83րդ): Աւստրիոյ կողմը նշանակեցին Ռոնէ Աուֆհաուզը (37րդ) եւ Ռոման Ուոլրըր (46րդ):

● ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ մէջ տեղի ունեցած մրցումին մը ընթացքին, հիւր կազմը՝ Պրագի 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Քաթալոնիոյ հաւաքականը, 97 հազար համակիրներու ներկայութեան: Պրագիի կողմը նշանակեցին Ռոնալտինի Կառլոս (22րդ եւ 45րդ) եւ Էտմիլիոն (76րդ), իսկ Քաթալոնիոյ հաւաքականին կողմը՝ Լուիս Կարսիա (63րդ): Մրցումը տեղի ունեցաւ «Նուրամի» մէջ:

● ՇԱՆԿՀԱՅԻ մէջ, Չինաստան 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Փ.Ս.Վ.: Այնտեղ ընկնէ: Ատէլ Ռամզի նշանակեց հոլանտական կազմին կողմը (14րդ):

● ՆԻԿԵՐԻԱ նոյն արդիւնքով պարտութեան մատնեց Ժամայան: Ճէյմս Օպիորա նշանակեց Նիկերիոյ եւ մրցումին «որը» կողմը (48րդ):

## «ԱՉԳԱԿ» Ի ՄՈՆՏԻՍՈՒԼԻ ՄՐՅԱՆՔՆԵՐ

Ինչպէս նախորդ Մոնտիալներուն, այս Մոնտիալին եւս «Աչգակ» կը կազմակերպէ յատուկ մրցանք, որուն հարցումները առօրեայ դրութեամբ պիտի հաղորդուին մամուլով:

Իւրաքանչիւր օրուան հարցումը պիտի տարբերի միւսներէն: Հարցումին ճշգրիտ պատասխանողը պիտի ստանայ տուեալ հարցումին համապատասխան նիշը:

Մինչեւ բացման մրցումին օրը՝ Շաբաթ, 31 Մայիս, ամէն օր պիտի հրատարակուի հարցում մը: Աւարտին, առաւելագոյն 70 եւ անվի նիշ ապահովողը պիտի ստանայ Պէյրութ - Լոնտոն - Պէյրութ օդանաւային տոմս մը: Նշենք, թէ հարցումները պիտի ըլլան տասրեւ անոնց ընդհանուր գումարը պիտի ըլլայ 100 նիշ: Հաւասարութեան պարագային՝ վիճակագրութեամբ կը ճշդուի շահողը:

Սակայն միայն այսպիսով պիտի չաւարտի Մոնտիալին մրցանքը, այլ Մոնտիալին մրցումներուն ընթացքին պիտի հրատարակուին տարբեր տեսակի բազմաթիւ մրցանքներ՝ օրը-օրին եւ պիտի ունենան իրենց համապատասխան նուէրները:

«Աչգակ»ի այս մրցանքին կարելի է մասնակցիլ մէկէ աւելի կտրօններով: Կ'ընդունուին միայն օրաթերթի կտրօնները: Պատճենահանուած կտրօններ նկատուի չեն առնուիր:

Սոյն մրցանքին չեն կրնար մասնակցիլ «Աչգակ»ի պաշտօնէանները:

Մրցանքին կտրօնները «Աչգակ»ի խմբագրատունը հասած պէտք է ըլլան առաւելագոյնը մինչեւ Ուրբաթ, 31 Մայիսի կէսօրուան ժամը 12:00ին, Ֆրանսա - Սենեկալ մրցումին առաջ, որ տեղի պիտի ունենայ ժամը 14:30ին (Պէյրութի ժամով):

ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 2  
Ո՞ր մարզիկը պիտի ըլլայ Մոնտիալին կոլաբորըրը (նշել միայն անունը): (10 նիշ)

\*\*\*  
Անուն.....  
Մականուն.....  
Հեռաձայն.....

## ՀԵԾԵԼԱՐԵԱԻ (ԺԻՐՕ)

## ԿԱՐԶԵԼԼԻ ԽԹԱՆԻՉ ԴԵՂ ԳՈՐԾԱԾԱԾ Է

Իտալացի հեծելաւորը Շեքֆանօ Կարգելլի, որ նախքան իտալիոյ հեծելաշաքի շրջափակը (ժիրօ) 6րդ հանգրուանը կը գրաւէր ընդհանուր դասաւորման պարագլուխի դերը եւ կը մնայ տիտղոսին գլխաւոր թեկնածուն, գործածած է խթանիչ դեղեր, յայտնեցին անոր խումբին, Մափէյի պատասխանատուները:

Հակառակ անոր որ ան արգիլեալ դեղեր գործածեց, սակայն իր մասնակցութիւնը բերաւ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած 6րդ եւ 7րդ հանգրուանի մրցումներուն:

Առաջին անգամ անոր արեան քննութիւնները տեղի ունեցան 2րդ հանգրուանին: Երկրորդին (վաղը), եթէ փաստուի, որ ան իսկապէս արգիլեալ խթանիչ դեղեր գործածած է, կրնայ զուրս դրուիլ ժիրոյէն: Շաբաթ օր տեղի ունեցած 6րդ հանգրուանին առաջին հանդիսացաւ իտալացի ծիփանի Լոմպարտի (Աքոնա - Մափոնէ), որ 191 քմ. հանգրուանին (Քիւնէն-Յէն վարացէ) արձանագրեց 4 ժամ 56' 45" արդիւնք մը:

Գերմանացի Ենս շեֆնըր (Թելեքոմ), որ 6րդ հանգրուանին հանդիսացաւ 7րդ ընդհանուր դասաւորման մէջ գրաւեց պարագլուխի դերը, 3' 33" առաւելութիւն մը ունենալով Կարգելլիի վրայ:

7րդ հանգրուանին, որ տեղի ունեցաւ երէկ Վիտրեկոյէն Լիսո տի Քամարիոն (159 քմ.), պելճիքացի Ռիք Վերպիլեկը (1րթօ) հանդիսացաւ առաջին, արձանագրելով 4 ժամ 3' 59" արդիւնք մը:

Վերջին 18 թիւմերը ան բաւական հեռացաւ իր մրցակիցներէն եւ առանձինը հասաւ ժամանան գիծ, 59 երկվայրկեանի առաւելութիւն մը ունենալով 2րդ դերը գրաւող գերմանացի Ռաֆայէլ Շվիտայի (Քոսթ) վրայ:

Շեֆնըր, որ ժամանան գիծ հասաւ մէկ վայրկեան 46" արդիւնքով ետ մնալով Վերպիլեկէն, այժմ ընդհանուր դասաւորման մէջ 3' 33" արդիւնքով կը գերազանցէ Կարգելլին: Այս վերջինը որոշեց շարունակել շրջափակը, մինչեւ որ յայտարարուին իր քննութիւններուն արդիւնքները:

Այսօր՝ Երկուշաբթի, տեղի կ'ունենայ 8րդ հանգրուանը, որ պիտի ըլլայ ժիրոյէնի արձանագրեալ հանգրուանը (237 քմ.): Անիկ պիտի սկսի Քափանորիէն եւ պիտի աւարտի Օրվիեթոյի մէջ:

- Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումը:
- 1.- Ենս շեֆնըր (Գերմանիա) Թելեքոմ 35 ժամ 25' 30"
  - 2.- Շեքֆանօ Կարգելլի (Իտալիա) Մափէյ 3' 33" ուշ
  - 3.- Եարոլաւ Փափոկիչ (Ուրբանիա) Լէնտպուլքընտիէ 3' 43" ուշ
  - 4.- Փիեթրօ Կաուչիոլի (Իտալիա) Ալեպիօ 3' 45" ուշ
  - 5.- Էտի Մացոլենի (Իտալիա) Թաքոնի Սփոր 3' 57" ուշ

